

## ԹՐՔԱԿԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՀՈԿԱՆԱԴՐՈՒԹԵԱՍԲ ՊՈԼՍՈՅ ՍԵՋ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ Է ՀԱԿԱՏԱՆԻ ԶՈՅՑ

Կիրակի, Փետրուար 26-ին Պոլսոյ մէջ տեղի ունեցած է Հակահայ ցոյց՝ նշելու համար Ղարաբաղեան պատերազմի ընթացքին խոշալուրի մէջ գոհուած 600 ատրպէյճանցիներու 20-րդ տարելիցը:



Հակահայ պատահարով ցուցարարներ՝ Պոլսոյ մէջ

Այս կապակցութեամբ, հայաստանեան text.am կայքէջը կը տեղեկացնէ: «Բոլորդ հայ էք, բոլորդ պոռնկորդիներ էք», «Բոլորս, բոլորս թուրք ենք», «Վերջ հայկական սուտին», «Հայկական սուտին լուռ մի՛ մնար», «ատամն ընդ ատամ, արիւն ընդ արիւն՝ վրէժիմներով», «Հրանդի պոռնկորդիները մեզի չեն կրնար վախցնել» կարգախօսներով, թուրքերոյ ներքին գործոց նախարար Նայիմ Շահինի եւ Պոլսոյ նահանգապետ Հուսէյն Մութլուի մասնակցութեամբ տեղի ունեցած ցոյցը կը վայելէր պետութեան ամբողջական գորակցութիւնը: Այս մասին կը գրէ թրքական «Հապէր Սոլ» կայքը:

Իր հերթին, թրքական «Թարաֆ» թերթը կը գրէ, թէ Պոլսոյ եւ Անգարայի մէջ տեղի ունեցան հակահայ ցոյցեր՝ այսպէս կոչուած «խոշալուրի գոհերը» յիշատակելու համար: «Հայերը թիրախ դարձ-

նելով՝ Տինքի սպաննոդներուն ի նպաստ կարգախօսներով՝ Պոլսոյ հանրահաւաքը վերածուեցաւ ազգայնամոլական ցոյցի», - կը գրէ թրքական թերթը եւ կը նշէ, թէ 1992-ին Հայաստանի եւ Ատրպէյճանի միջեւ տեղի ունեցած խոշալուրի «ցեղասպանութեան» 20րդ տարեդարձին առիթով Պոլսոյ թաքսիմ հրապարակին վրայ տեղի ունեցած բողոքի ցոյցը վերածուեցաւ ազգայնամոլական ցոյցի: Թերթի համաձայն, Հրանդ Տինքի մարդասպաններուն ի նպաստ՝ խումբ մը ցուցարարներ ուղեցին դէպի «Ակոս»-ի խմբագրատուն քալել՝

Մար.ը էջ 4

## ՖՐԱՆՍԱՅԻ ՍԱՀՄԱՆԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՐԴԻ ՈՐՈՇՈՒՄԵՆ ԵՏՔ ՆԱԽԱԳԱՐ ՍԱՐՔՈՋԻ ՆԱԽԱՁԵՈՆԱԾ Է ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾ

Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդի կողմէ Հայոց Ցեղասպանութեան ժխտման համար քրէական պատիժ սահմանող օրինագիծի հակասահմանադրական ճանաչումէն ետք, նախագահ Նիկոլա Սարքոզի յանձնարարած է կառավարութեան՝ նոյնանման նոր օրինագիծ մշակել:

Ֆրանսիայի նախագահի գրասենեակը յայտարարութեամբ մը հանդէս եկած է, ուր յայտնելէ ետք օրինագիծի աջակիցներու «մեծ հիասթափութիւնը եւ խոր տխրութիւնը», ըսած է. - «Հանրապետութեան նախագահը կը համարէ, որ ուրացումը անհանդուրժելի է եւ հետեւաբար պէտք է պատժուի: Ան խնդրած է կառավարութեան՝ պատրաստել նոր օրինագիծ, նկատի առնելով Սահմանադրական Խորհուրդի որոշումը:

Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդը հակասահմանադրական ճանչցաւ ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնող օրինագիծը՝ պատճառաբանելով, որ ան կը հակասէ խօսքի ազատութեան: Ֆրանսայի Մերակոյտը Յունուար 23-ին ձայներու 127 կողմ եւ

86 դէմ չարաբերակցութեամբ ընդունած էր ցեղասպանութիւններու ժխտումը քրէականացնելու մասին օրինագիծը (օրինագիծը կը վերաբերի Ֆրանսայի կողմէ ճանչցուած ցեղասպանութիւններու ժխտման քրէականացման: Ֆրանսան Հայոց Ցեղասպանութեանէն բացի ճանչցած է նաեւ հրեաներու ողջակիզումը՝ Հոլոքոսթը, որուն ժխտումը արդէն իսկ քրէականացուած է Ֆրանսայի մէջ): Նոր օրինագիծին համաձայն, Ֆրանսայի մէջ Հայոց Ցեղասպանութիւնը ժխտողներուն 1 տարուան ազատազրկում եւ 45.000 եւրօ տուգանք կը սպառնար:

Օրինագիծին դէմ հանդէս եկած խորհրդարանականները, անոր սահմանադրականութիւնը վիճարկելու նպատակով, 31 Յունուարին Ֆրանսայի Սահմանադրական Խորհուրդի մոտ ներկայացուցած էին:

Սահմանադրական Խորհուրդի որոշումէն ետք, թուրքերոյ Արտաքին Գործոց նախարարութիւնը հրապարակեց յայտարարութիւն մը, յայտնելով թէ Ֆրանսայի իրաւական ամենաբարձր ատենի կողմէ սարսափելի սխալի ուղղումը գոհացուցիչ է:

## ՍԵՅՐԱՆ ՕՐԱՆԵԱՆ ԵՒ ՆԱԹՕ-Ի ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԱԾ ԵՆ ՀԱՍԱԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՆ ՀԱՐՑԵՐԸ



ՆԱԹՕ-ի ներկայացուցիչները Սէյրան Օհանեսանի հետ հանդիպման ընթացքին

Հայաստանի պաշտպանութեան նախարար Սէյրան Օհանեսան Փետրուար 29-ին, ընդունած է ՆԱԹՕ-ի գլխաւոր քարտուղարի օգնական, դեսպան Հուսէյն Դիրիոզի գլխաւորած պատուիրակութիւնը:

ՀՀ Պաշտպանութեան Նախարարութեան մամուլի ծառայութիւնը այս կապակցութեամբ տեղեկացուց, որ պատուիրակութեան այցը կապուած է ՆԱԹՕ-ի կառուցներու համատեղ խումբի Հայաստան կատարած այցին, որ պաշտպանութեան նախարարութեան համապա-

տասխան անձնակազմին հետ այժմ կ'իրականացնէ Հայաստան-ՆԱԹՕ գործընկերութեան ծրագիրը:

Նախարար Օհանեսան եւ դեսպան Հուսէյն Դիրիոզ անդրադարձած են ՆԱԹՕ-ի հետ պաշտպանութեան նախարարութեան համագործակցութեան գլխաւոր ուղղութիւններուն, որոնցմէ են ռազմական կրթութիւնը, կրտսեր հրամանատարներու արհեստավարժինստիտուտի զարգացումը, փոխ-

Մար.ը էջ 5

## ԵՐԱՍԻՈՒԹԻՒՆԸ ՄՏԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿԸ ՅԱՅՏՆԷ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՎԵՐԱԲԵՐԵԱԼ

Փետրուար 28-ին, Պրիւքսելի մէջ կայացած Եւրամիութեան արտաքին գործոց նախարարներու հանդիպման ընթացքին, Եւրամիութեան արտաքին հարցերու յանձնակատար Քէթրին էշթըն ներկայացուց փաստաթուղթ մը, Հարաւային Կովկասի տարածաշրջանէն ներս տիրող իրավիճակի մասին:

Եւրոպայի Միութեան անդամ 27 երկիրներու արտաքին գործոց նախարարներուն կողմէ քննարկուելիք փաստաթուղթին մէջ անդրադարձ կայ նաեւ Հայաստանի ներքին իրավիճակին եւ յառաջիկայ ընտրութիւններուն:

Փաստաթուղթի նախագիծի համաձայն Եւրոպայի Միութեան Արտաքին Գործոց Նախարարներու Խորհուրդը կը շեշտէ Հայաստանի յառաջիկայ ընտրութիւնները ազատ եւ արդար, միջազգային չափանիշներուն համապատասխան կայացնելու կարեւորութիւնը ու կը յայտնէ, որ ուշադրութեամբ պիտի հետեւի անոր ընթացքին:

Շուէտի արտաքին գործոց նախարար Քարլ Բիլդտ այս ուղղութեամբ յայտարարեց որ, Հայաստանի մէջ սպասուող ընտրութիւններու կապակցութեամբ կան որոշ

մտահոգութիւններ եւ նախարարները պէտք է կեդրոնանան այս հարցի վրայ:

Ընտրութիւններէն բացի կ'ակնկալուի որ, նախարարները անդրադառնան նաեւ Հայաստանի մէջ իրականացուող բարեփոխումներուն՝ կոչ ընելով Հայաստանի իշխանութիւններուն շարունակել ջանքերը այս ուղղութեամբ եւ ամրապնդել ժողովրդավարական կառուցները, մարդու իրաւունքներու պաշտպանութիւնը, մամուլի բազմակարծութիւնն ու դատական համակարգի անկախութիւնը:

Յատկանշական է որ, փաստաթուղթի նախագիծին մէջ Եւրամիութիւնը առանձին անդրադարձած է կոռուպցիայի հարցին եւ յատուկ շեշտ դրած է այդ երեւոյթին դէմ արդիւնաւէտ պայքար մղելու կարեւորութեան վրայ:

«Այս ոլորտէն ներս իրական յառաջընթացը կը շարունակէ մնալ տնտեսութեան զարգացման ու բարգաւաճման հիմքը», - ըսուած է Եւրամիութեան պատրաստած փաստաթուղթին մէջ:

Փաստաթուղթին մէջ գլխաւորաբար անդրադարձ կայ Լեռնային Ղարաբաղի հարցին շուրջ:

# ՆՈՐ ԶԱՐԳԱՑՈՒՄ ԴԱՐԱԲԱՂԻ ՀԱՐՑՈՒՄ

# ՀՀԿ-Ի «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ» ՔԱՐՈՋՉՈՒԹԻՒՆԸ

## ՅԱԿՈՐԲԱՂԱԼԵԱՆ

Եւրամիութեան արտաքին գործերի եւ անվտանգութեան քաղաքականութեան հարցերով գերագոյն յանձնակատար Քեթրին էշթոնը յայտարարել է, թէ Եւրամիութիւնը կը ցանկանար աւելի կարեւոր դեր խաղալ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանն աջակցելու հարցում:

Եւրամիութեան արտգործնախարարները հաւաքուած են Բրիւսելում, որտեղ տեղի ունեցող քննարկումները շարքում լինելու է նաեւ Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան խնդիրն ու ընդհանրապէս Հարաւային Կովկասի իրավիճակը:

Ինչպէս յայտնի է, Եւրամիութիւնն ուղղակի ներգրաւուածութիւն չունի Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորման գործընթացում: Ներկայ է ԵՄ առաջատար երկրներից մէկը՝ Ֆրանսան, որը սակայն հանդէս չի գալիս որպէս Եւրամիութեան ներկայացուցիչ: Աւելին, Ֆրանսան Միւսկի խմբում թերեւս վարում է առաւելապէս ինքնուրոյն քաղաքականութիւն, ինչի համար էլ ժամանակ առ ժամանակ առաջանում են Ֆրանսայի մանդատը Եւրամիութեամբ փոխարինելու մասին խօսակցութիւններ, իսկ Եւրամիութիւնն էլ ներկայում խօսում է Ղարաբաղի հակամարտութեան կարգաւորմանն իր աջակցութիւնը մեծացնելու մասին:

Յատկանշական է, որ այդ խնդիրը օրակարգում է յայտնուում Հարաւային Կովկասում Ֆրանսայի ակտիւացմանը գուրահետ: Ֆրանսայի ակտիւութեանն այսպէս ասած պաշտօնական մեկնարկը կարելի է համարել նախորդ տարուայ Հոկտեմբերին Ֆրանսայի նախագահի տարածաշրջանի երկրներ կատարած այցը:

Այն, որ Ֆրանսան կարող է Հարաւային Կովկասի եւ Ղարաբաղի հարցում վարել որոշակի առանձին քաղաքականութիւն, միանգամայն տրամաբանական եւ օրինաչափ է թւում: Բանն այն է, որ Ֆրանսան համաշխարհային տէրութիւն է, որի շահը չափազանց լայն է Եւրամիութեան ընդհանուր շահի մէջ տեղաւորուելու համար:

Միւս կողմից, չի բացառուում, որ խնդիրը ամենեւին էլ Եւրամիութեան եւ Ֆրանսայի շահերի բախումը է, այլ փոխլրացումը: Այսինքն, Եւրամիութիւնն ուղղում է ակտիւանալ ոչ թէ Ֆրանսայի մասնակցութիւնից դժգոհ լինելու պատճառով, այլ Ֆրանսայի մասնակցութիւնը լրացնելու: Այլ կերպ ասած, Եւրամիութեան ակտիւացումը կարող է նպաստել Միւսկի խմբում Ֆրանսայի դերի բարձրացմանը:

Բոլոր դէպքերում, անկախ նրանից, թէ ինչի հետ գործ ունենք՝ շահի բախման, թէ լրացման, պարզ է, որ Եւրամիութիւնը Ղարաբաղի հարցում իր ներգրաւուածութիւնը մեծացնելու առումով ունի նոր ոճի, նոր մօտեցումների անհրաժեշտութիւն:

Եթէ Եւրամիութիւնն անելու է նոյն բանը, ինչ անում է ասենք Ֆրանսան, ապա բացարձակապէս անիմաստ է թէ Ֆրանսային փոխարինելը, թէ լրացնելը: Առաւել եւս անիմաստ է Եւրամիութեան ներգրաւուածը, եթէ այն

պէտք է լինի նոյն կանոնների շրջանակում, որում գործում է Միւսկի խումբը:

Եւրամիութիւնը պէտք է նոր խօսք ասի կարգաւորման գործընթաց կոչուող տիրոջ խումբ: Իսկ նորը թերեւս կը լինի այն, որ առաջարկուի հակամարտութեան հանգուցալուծման նոր մոդել՝ տրամագծօրէն տարբեր, քան այն, ինչ առաջարկուած է Միւսկի խմբի շրջանակում:

Միւսկի խումբը, ինչպէս յայտնի է, առաջարկում է կարգաւորել հարցերը փուլային կամ փաթեթային տարբերակով, որպէսզի հակամարտութեան կարգաւորումն աչլու չխոչընդոտի տարածաշրջանային ինտեգրացիային:

Իրականում, թերեւս Միւսկի խմբի համաձայնագրի երկրների համար էլ պարզ է, որ այդ մոդելը վաղուց է սպառել իրեն եւ գործնականում ոչ միայն կիրառելի չէ, այլ նոյնիսկ ինչ որ ձեւով պարտադրելու դէպքում այն բաւական պայթիւնապատանգ է: Աւելին, ինչպէս կարելի է դատել հակամարտութեան կարգաւորման ներկայիս գործընթացից, դրա ակնյայտ իմիտացիոն բնույթից, Միւսկի խումբը եւ առնուազն դրա երկու արեւմտեան համախաղաղները՝ ԱՄՆ եւ Ֆրանսան, վաղուց են հրաժարուել այդ մոդելից՝ յօգուտ ստատուս-քոլոյի պահպանութեան: Միւսկի խումբը ներկայում հանդիսանում է տարածաշրջանային շատ աւելի լայն օրակարգի շուրջ քննարկումների ֆորմատ, եւ ԱՄՆ, Ֆրանսան ու Ռուսաստանը առաւելապէս կենտրոնացած են այդ աւելի լայն օրակարգի, քան բուն Ղարաբաղի խնդրի վրայ:

Ինքնահաստատուելու մեղավեղեան ջանքերը բարեբախտաբար անցան ապարդիւն, երբ ՌԴ երիտասարդ նախագահը ինչ որ դաշտ էր փնտռում քաղաքականութեան մէջ իր կենսունակութեան ապացոյցներ ներկայացնելու համար: ՌԴ գալիք նախագահ Փութինի պարագայում այդ ինքնահաստատման կարիքը թերեւս չի լինի, քանի որ Փութինը ոչ ոքի ոչինչ ապացուցելու կարիք չունի եւ ամենայն հաւանականութեամբ կը բաւարարուի ընդամենը Միւսկի խմբում Ռուսաստանի դերի պահպանման խնդիրը լուծելով, թոյլ չտալով դրա յետընթաց:

Այլ կերպ ասած, Ղարաբաղի հարցում Եւրամիութեան ներկայիս հաւակնութիւնները աւելի շատ ոչ թէ ներգրաւուածութիւն են յիշեցնելու՝ ներգրաւուածութիւն խնդրի լուծմանը աջակցելու գործին, այլ թերեւս հանդիսանալու են կարգաւորման միակ եւ իրական հարթակը, եթէ իհարկէ Եւրամիութեանը յաջողուի առաջարկել նոր մոդել: Ընդ որում, Եւրամիութիւնն այդ հարթակի դերը թերեւս ստանձնելու է առնուազն Միւսկի խմբի երկու երկրների հաւանութեամբ՝ ԱՄՆ եւ Ֆրանսայի, եւ թերեւս Ռուսաստանի համակերպմամբ:

Միւսկի խումբը, ըստ ամենայնի, արդէն կը ստանձնի Եւրամիութեան կարգաւորման քաղաքականութեան «ժանդարմի» կամ «սեփուրտի» դերը, որպէսզի հանկարծ չլինեն տարբեր էքսցեսներ: Չի բացառուում, որ Միւսկի

## ՄԱՐԿՆՇԱՆԵԱՆ

Այս օրերին հանրապետականները գիւղէգիւղ ընկած՝ մարդկանց հարցուփորձ են անում, թէ ի՞նչ պրոբլեմներ կան, ինչի՞ կարիք ունեն, ի՞նչ խնդիրներ պիտի լուծուեն առաջին հերթին եւ այլն: Մարդիկ էլ տարբեր պատասխաններ են տալիս: Մէկն ասում է «սերմացու չունենք», մէկն ասում է «ճանապարհները պիտի սարքուեն», մէկն ասում է «տեխնիկա չկայ, վառելիքն էլ թանկ է» եւ այլն: Սրանք էլ իրենց ծոցատետրերում «պտիչկաներ» են դնում ու անցնում յաջորդ գիւղին: Իբր՝ ձեր հոգսերն իմացանք, եթէ մեզ ընտրէք՝ անպայման բոլոր հարցերը կը լուծենք: Ու մէկը չկայ ասի՝ «լուծող էիք՝ մինչեւ հիմա լուծէիք, տասներկու տարի է իշխանութեան էք»:

Բայց ինչի՞ համար է այս թամաշան, իշխանութիւնները չգիտեն, թէ ինչ է պէտք մարդկանց, նոր պիտի իմանան: Իհարկէ գիտեն: Աւելին՝ գուցէ նոյնիսկ ուրախ կը լինէին լուծել այդ խնդիրները, բայց չեն կարողանում. «խասաթը» թոյլ չի տալիս: Ասենք՝ գիտեն, որ գիւղացիներին էօան վառելիք է պէտք, բայց դրա համար պիւտոճէից վճարում են իրենց ընկերոջը, վառելիքն էլ այսպէս թէ այնպէս գիւղացուն չի համարում ու յայտնում է շուկայում: Կամ, ասենք, գիտեն, որ գիւղացուն վարկեր են պէտք: Եւ ի՞նչ. այնպիսի տոկոսներով են տալիս վարկը, որ գիւղացին վախենում է մօտենալ, ով էլ չի վախենում՝ տոկոսների տակ է մնում: Ուշադրութիւն դարձրէք՝ իշխանութիւններն իրականացնում են միայն այն ծրագրերը, որտեղից «նաղդ փող» ունեն: Եւ քանի որ իրենց նպատակը միայն այդ փողն է, ծրագրերն իրենց նպատակին չեն ծառայում:

Եւ այնուամենայնիւ, լաւ է, որ իշխանութիւնները գոնէ ընտրութիւններից առաջ փորձում են մարդկանց դուր գալ: Այլ հարց է, որ բաւականին չիմար ձեւով են անում դա: Վերջերս, օրինակ, միանգամից երկու «գրական բան» արեցին. ժամանակաւորապէս կասեցրեցին Մաշտոցի պուրակի այլանդակումը, կառավարութիւնն էլ ետ վերցրեց «Արտակարգ դրութեան իրաւական ռեժիմի մասին» օրէնքում փոփոխութիւններ անելու առաջարկը: Առաջին հայեացքից իրար հետ կապ չունեցող այս երկու քայլերն, ի դէպ, նոյն տրամաբանութիւնն ունեն: Իշխանութիւնները սկզբում մի մեծ յիմարութիւն են անում, չետոյ այդ յիմարութիւնը կիսատ թողնում, եւ տպաւորութիւն է ստեղծում, թէ ժողովրդին մեծ լաւութիւն են արել: Օրինակ, Մաշտոցի պուրակում ինչը պիտի աւերէին՝ արդէն աւերել են, հիմա ժամանակաւորապէս կասեցնելուց ի՞նչ օգուտ: Կամ, ասենք, արդարադատութեան նախարարը յայտարարում է, թէ օրէնքում մի երկու կէտ փոխել են, եւ բանակն, իհարկէ, ներգրաւուելու է արտակարգ դրութեան պայմաններում, բայց բնակչութեան հետ «առաւելապէս» չի շփուելու: Հիմա երեւի ազգովի պիտի շնորհակալութիւն յայտնենք այս մեծ հումանիտարներին, որ տանկերը, փաստօրէն, մարդկանց վրայով չեն անցնելու, կողքով են անցնելու: Ի դէպ, հետաքրքիր է՝ եթէ կողպատիչները ներխուժեն մէկի տունը, տանափրոջը մի երկու չափալախ տան, եղած-չեղածը հաւաքեն, բայց

դուրս գալուց առաջ ասեն «լաւ, սակեղէնի կէսը ձեզ ենք թողնում», կարելի՞ է այդ կողպատիչներին համարել մեծ հումանիտաներ եւ հիանալ նրանց մեծահոգութեամբ: Հիմա իշխանութիւնները փաստօրէն նոյն բանն են անում եւ նոյնիսկ գովազդում են դա՝ փորձելով օգտագործել նախընտրական նպատակներով: Խոսքով Յարութիւնեանն էլ իր հերթին է մեծ լաւութիւն անում երեւանցիներին՝ առաջարկելով Մաշտոցի պուրակի կրպակները հանել, դրանց տէրերին էլ պիւտոճէից փոխհատուցում տալ: Աչքներս լոյս: Սրանք ծանօթով-կաշառքով-բանով Աբովեան փողոցն աւերել են, կաշառք վերցնողը վերցրել ու հիմա հանգիստ վայելում է, բայց փոխհատուցումը պիտի տրուի հարկատուների գրպանից: Այսինքն՝ շարքային երեւանցիներն պիտի իր գրպանից փող տալ Աբովեան փողոցն այլանդակած օլիգարխներին, որպէսզի սրանք Մաշտոցի պուրակը նոյնպէս չայլանդակեն:

Մի խօսքով՝ ՀՀԿ-ի նախընտրական քարոզարշաւը շատ հետաքրքիր ու «մարդասիրական» է ստացւում: Այդպիսի մարդասիրութիւն մէկ էլ Օսմանեան կայսրութիւնում կար, որտեղ սուլթանն, օրինակ, կարող էր իր ծննդեան օրուայ առթիւ մի քանի մահապատիժ չեղեալ յայտարարել կամ հրամայել, որ գլուխը կտրելու փոխարէն միայն աչքերը հանեն: Հայաստանի իշխանութիւններն էլ նոյն ձեւով մտածում են, թէ իրենց այս քայլերով պիտի շահեն մարդկանց համակրանքը եւ ընտրութիւններում յաղթեն: Գուցէ եւ ստացուի. մէկ էլ տեսար՝ մէկկուկէս-երկու տոկոսը հաւատաց:

Յ. Գ. Պաշտօնական տուեալների համաձայն, այսօրուայ դրութեամբ Հայաստանում մօտ 44 հազար հոգեկան հիւանդ կայ: Դա կազմում է բնակչութեան մէկկուկէս տոկոսը:

**ՄԱՍԻՍ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ**  
 ՊԱՇՏՕՆԱԹԵՐԹ՝  
 ՍՈՑԻԱԼ ԴԵՄՈԿՐԱՏ ԶՆԱՍԿԵԱՆ  
 ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ  
 Արեւմտեան Ամերիկայի Շրջանի  
 ԽՄԲԱԳԻՐ՝  
 ՏՕԹԹ. ԱՐՇԱԿ ԳԱԶԱՆՃԵԱՆ  
 ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ՝  
 ԳԱՐԻԷԼ ՍՈԼՈՅԵԱՆ  
 ՍԱՀԱԿ ԹՈՒԹՅԵԱՆ  
 ՅԱՐՈՒԹ ՏԵՐ ԴԱԻԹԵԱՆ  
 ՎՈՐՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ  
 ԼԵՆԱ ՍԱՆՈՒԿԵԱՆ  
**MASSIS Weekly**  
 Organ of the Armenian Social Democratic Hunchakian Party of Western USA  
 1060 N. Allen Ave.  
 Pasadena, CA 91104  
 Phone: (626) 797-7680  
 Fax: (626) 797-6863  
 E-Mail: massis2@earthlink.net  
 http://www.massisweekly.com  
 (USPS 667-310) (ISSN 0744-334X)  
 Published Weekly  
 Except Two Weeks in August  
 ANNUAL SUBSCRIPTION RATES:  
 USA \$50.00, \$80.00 (First Class)  
 Canada \$125.00 (Air Mail)  
 Overseas \$225.00 (Air Mail).  
 All payments must be made in US funds & Drawn on US banks.  
 Periodicals Postage Paid at Pasadena CA.  
 Please Send Address Change To MASSIS WEEKLY



ՀԱՅԱՍՏԱՆ

ԳՈՐԾԱՐԱՐՆԵՐԸ ՄՏԱԴԻՐ ԵՆ ԱՌԱՋԱԴՐՈՒԵԼ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՄ

Մայիսի 6-ին կայանալիք խորհրդարանական ընտրություններին հայաստանեան յայտնի գործարարներից ոմանք առաջադրելու են իրենց թեկնածուները:

Նրանք ընդգրկուած չեն լինի իշխող կուսակցությունների համամասնական ցուցակներում, սակայն կ'առաջադրուեն մեծամասնական ընտրակարգով:

Թիւ 7 ընտրատարածքում, որն ընդգրկում է Երեւանի Մալաթիա-Սեբաստիա համայնքն ու Աջափնեակ համայնքի որոշ տարածքներ, առաջադրուելու ցանկում թիւն ունի գործարար, պատգամաւոր (ՀՀԿ) Սամուէլ Ալեքսանեանը: Նրա խօսքով, նախագահ Սերժ Սարգսեանի յայտարարութիւնը, թէ գործարարութիւնը պէտք է տարանջատուի իշխանական համակարգից, իրեն չի վերաբերում. - «Ես գործարար չեմ. Կինս է գբաղուած, ես չկամ»:

Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի նախագահ Ռուբէն Հայրապետեանը թէ էլ յայտարարել էր, որ չի առաջադրուելու առաջիկայ ընտրություններում, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում ասաց. - «Իմ կուսակցութիւնը ոնց որոշի՝ տենց էլ կ'անեմ. Կարծում եմ՝ կը դնեմ»:

Հայրապետեանը, լիշեցնենք, 2007 թուականին ընտրուել էր թիւ 1 ընտրատարածքից (Երեւանի Աւան համայնք): Նա «Ազատութիւն» ռադիոկայանին ասաց, թէ «Նարաւոր է, որ Կենտրոնում կամ

Ձէյթունում դնի իր թեկնածուները. - «Ես Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի եմ: Հայաստանում որտեղ ուզեմ, այնտեղ էլ կը դնեմ»:

Կենտրոն համայնքում, Յիշեցնենք, առաջադրուելու մտադրութիւն է յայտնել նաեւ Ազգային ժողովի նախկին պատգամաւոր, Մարտի 1-ի գործով քրէական հետապնդման ենթարկուած Խաչատուր Սուքիասեանը: 2010-ին Սուքիասեանի նկատմամբ քրէական հետապնդումը դադարեցուցեց՝ յանցագործութեան կատարմանը նրա մասնակցութիւնը ապացուցուած չլինելու հիմքով: Ռուբէն Հայրապետեանին է այժմ պատկանում նաեւ նախկինում Սուքիասեանների ընտանիքի սեփականութիւնը հանդիսացող «ԲՉՆի» հանքային ջրերի գործարանը:

Արագածոտնի մարզում՝ թիւ 15 ընտրատարածքում իր թեկնածուութիւնը առաջադրուելու հաստատ որոշում ունի նաեւ «Մաքս գորուպ» ընկերութեան սեփականատէր Խաչիկ Մանուկեանը: Ըստ մամուլի՝ նրա մրցակիցն է լինելու Թալինի նախկին քաղաքապետ Մնացական Մնացականեանը:

«Ազատութիւն» ռադիոկայանի հարցին, թէ արդեօք ՀՀԿ-ն աջակցելու է իրեն, Մանուկեանը պատասխանեց. - «Դեռ համագումարին ենք սպասում: Համագումարից յետոյ յստակ կ'որոշուի»:

«ՀԱԿՈՒՄ ՏԱՐԱԶԱՅՆՈՒԹԻՒՆՆԵՐ ԶԿԱՆ, ԿԱՆ ԱՄԲԻՑԻԱՆՆԵՐ», - ԱՐՄԱՆ ՄՈՒՍԻՆԵԱՆ

Հայ ազգային կոնգրէս ընդդիմադիր դաշինքում համամասնական ցուցակը կազմելու հարցում տարաձայնութիւններ չկան, կան ամբիցարիներ, որոնք նորմալ է: Փետրուար 27-ին հրաւիրուած ասուլիսին ասաց ՀԱԿ մամուլի քարտուղար Արման Մուսինեանը:

«Պատկերացրէք 18 կուսակցութիւն նաեւ անկուսակցական գործիչների ստուար զանգուած, որոնք պակաս ներդրում չեն ունեցել կատարած աշխատանքներում: Այս պայմաններում կը լինեն մարդիկ, որոնք կ'ունենան ամբիցարիներ եւ դա նորմալ է», - ասաց նա:

Արման Մուսինեանը նաեւ նշեց, որ այսուհետ ՀԱԿ-ն ամենօրեայ ռեժիմով կ'անցնի միջկուսակցական քննարկումների եւ նիստերի: Իսկ այս պահին ցուցակի հարցում, ըստ նրա, քննարկումները շարունակուած են: «Նաեւ նախագահ Տէր-Պետրոսեանի դիրքորոշումն է այս հարցում միանշանակ. բոլոր 18 կուսակցութիւնների կոնսենսուսով ընդունուած որոշմամբ առաջնորդուել», - ասաց նա:

Հարցին, թէ արդեօք քիչ ձայներ ստանալու դէպքում ՀԱԿ-ը կը բոլորի ընտրությունները եւ վայր կը դնի իր մանդատները, Մուսինեանը պատասխանեց. «Եթէ ունենանք մէկ պատգամաւոր եւ այն լինի արդար ընտրություններով ստացած



ՀԱԿ մամուլի քարտուղար Արման Մուսինեան

ձայների հաշուին, մենք առաջինը կը շնորհաւորենք միւսներին: Իսկ եթէ կեղծուեն՝ հարաւոր է եւ վայր դնենք մանդատները: Ամէն ինչ հարաւոր է», - ասաց նա եւ լաւելեց, որ Կոնգրէսը խորհրդարան չի գնում մանդատների համար, այլ այն օգտագործում է միմիայն որպէս միջոց իրենց առաջարկած փոփոխութիւններին հասնելու համար:

ՀԱԿ մամուլի քարտուղարը՝ չցանկացաւ անդրադառնալ թուերին, սակայն հաւատացրեց, որ կեղծիքներ չլինելու պարագայում իրենք ԱԺ-ում կ'ունենան ծանրակշիռ առաւելութիւն: Դեռ աւելին, ըստ նրա, արդար ընտրությունների դէպքում «իշխող կուսակցութիւնների հետքն անգամ չի լինի» խորհրդարանում:

«ԱՐԱԲԿԻՐՈՒՄ ՀԱՒԱՔՈՒՄ ԵՆ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ԵՒ ԿԱՇԱՌՔ ՏԱԼԻՍ», - ԼԱՐԻՍԱ ԱԼԱՎԵՐԴԵԱՆ

Արաբկիր վարչական շրջանում բնակուող «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Լարիսա Ալաւերդեանը յաճախակի է զանգեր ստանում տարբեր շէնքերի բնակիչներից, որ համատիրութեան աշխատակիցները հաւաքում են մարդկանց անձնագրերը:

«Մարդը ասում է գիտէք ես տեղ ունեմ գնալու, ասում են ոչինչ տուէք յետոյ կը տանք: Եւ արդէն սկսուել է ընտրակաշառքների բաժանման փուլը», - ա Լարիսա Ալաւերդեանն ասաց Հայաստանի Հանրապետական կուսակցութեան պատգամաւոր Արտակ Չաքարեանն հետ բանավէճին:

Հարցին, թէ պատգամաւորը գնացել եւ տեսել է այն մարդկանց ովքեր բաժանում են ընտրակաշառքը, նա պատասխանեց. «Այս գործընթացը վերաբերում է անորսալի երեւոյթներին, որը կարելի է վերացնել, եթէ վերացնենք մեծամասնական խողովակը: Եթէ գնաւ այդ մարդկանց գտնես, ասես ինչու ես նման բան անում, կասի՝ «Ես»», - Ալաւերդեանի խօսքով՝ այսօր մեր հայ հասարակութիւնն իր սոցիալ-տնտեսական վիճակի պատճառով պատրաստ է մատող անել իր սպազան:

Իր խօսքում Լարիսա Ալաւերդեանը պարզապէս չի շարժուել «Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Լարիսա Ալաւերդեանի հարցին, որ իշխանութիւնն օգտագործում է վարչական ռեսուրսները՝ աւելացնելով, որ շաբաթ-կիրակի վարչապետը Տիգրան Սարգսեանը մարդեր էր այցելել պետական մեքենաներով:



«Ժառանգութիւն» խմբակցութեան պատգամաւոր Լարիսա Ալաւերդեան

«Ոչ նա մեկնել է աւտոբուսով, - Ալաւերդեանի պնդմանն ի պատասխան ասաց Արտակ Չաքարեանը, - Ոչ մի պետական մեքենայ չի եղել: Դրա մասին կարող են փաստել բոլորը»:

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԱՂՔԱՏՈՒԹԻՒՆԸ ԿԱԶՄՈՒՄ Է 35,8 ՏՈԿՈՍ

Հայաստանում աղքատութիւնը կազմում է 35,8 տոկոս. յատկանշական է, որ նրանց 1/3 մասն աշխատանք ունի: Այս մասին Փետրուարի 29-ին, Ազգային ժողովում յայտարարեց Հայաստանի աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարար Արթուր Գրիգորեանը:

Նրա խօսքով, մտահոգիչ է ոչ միայն աղքատութեան, այլեւ՝ աշխատանքով ապահոված աղքատ մարդկանց մեծ թիւը: Ըստ նրա՝ աւելացել է ծայրայեղ աղքատ հայաստանցիների թիւը՝ 1,3 տոկոսից հասնելով 3 տոկոսի: «Նախարարութիւնն ուղղորդութիւն է դարձնում 2012թ. նախատեսուած սոցիալական ծրագրերին: Բիւջէի ծախսային մասի մօտ 30 տոկոսը նախատեսուած է սոցիալական ապահովութեան համար», - ասաց նախարարը:

ՀԱՄԱՄԱՍՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՐԳԻ ՕՐԻՆԱԳԻԾԸ ԶԸՆԴՈՒՆՈՒԵՑ

Հայաստանի Ազգային ժողովը Փետրուար 29-ին մերժեց խորհրդարանական ընտրությունների 100-տոկոսանոց համամասնական ընտրակարգ նախատեսող օրինագիծը, որը համատեղ ներկայացրել էին Դաշնակցութիւն եւ «Ժառանգութիւն» խմբակցութիւնները:

Նախագծին կողմ քուէարկեց 30, դէմ՝ 56 պատգամաւոր:

Օրինագծին դէմ էին իշխող Հանրապետական կուսակցութիւնը եւ նրա կողմիցին գործընկեր «Օրինաց երկիրը», սակայն քուէարկութեան արդիւնքները ցոյց տուցին, որ դաշինքում ներկայ ոչ բոլոր ՕեԿ-ականներն էին դէմ օրինագծին՝ եղաւ նաեւ ձեռնպահ քուէարկող:

«Բարգաւաճ Հայաստան» խմբակցութիւնը ազատ քուէարկելու որոշում էր կայացրել, բայց Հանրապետականների կողմիցին գործընկերները հիմնականում պաշտպանեցին ընդդիմադիրների առաջարկը:

Նախաձեռնութիւնը պաշտպանող արտախորհրդարանական ընդդիմութեան՝ Հայ ազգային կոնգրէսի, ինչպէս նաեւ խորհրդարանական «Ժառանգութեան» եւ Դաշնակցութեան ներկայացուցիչները, չնայած օրինագծի մերժմանը, «Ազատութիւն» ռադիոկայանի հետ գրոյցում պատրաստակամութիւն յայտնեցին ազատ ընտրություններ ապահովելու հարցում շարունակել համագործակցությունը:

«Նրանք, ըստ էութեան, խոստովանում են, որ չունեն յաղթանակի համար անհրաժեշտ ժողովրդի քուէն: Պատրաստ են իշխանութիւնը պահպանել միայն օգտագործելով օլիգարխներին, տեղական հեղինակութիւնների ռեսուրսները ընտրակաշառքի, ահաբեկման նպատակով», - յայտարարեց Հայ ազգա-

յին կոնգրէսի համակարգող Լեւոն Զուրաբեանը: - «Մենք այդ մարտահրաւէրը ընդունում ենք: Դա նաեւ նշանակում է մի բան, որ այս համախմբումը, որ կայ՝ քաղաքական ուժերի, պէտք է միայն խորացնել»:

ՀԱԿ ներկայացուցիչը նոյնպէս յայտարարեց, որ իրենք պատրաստ են համագործակցել բոլոր ուժերի հետ՝ «որ բեկում մտցնենք եւ 2012 թուականը դառնայ բախտորոշ Հայաստանի ժողովրդավարութեան կայացման համար»:

«Մենք պատրաստ ենք բոլոր այս ուժերի հետ՝ լինի դա «Ժառանգութիւնը», Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը, «Բարգաւաճ Հայաստան» կուսակցութիւնը, լինեն առանձին Հանրապետականներ, որոնք չեն ցանկանում Սերժ Սարգսեանի ղեկավարած Հանրապետական կուսակցութեան յանցագործութիւններին մասնակից դառնալ», - ասաց Լեւոն Զուրաբեանը:

«Այս նախաձեռնութիւնը նախեաւ ընտրակեղծիքների խողովակը փակելու նպատակ ունէր: Իշխանութիւնը չցանկացաւ անել դա», - կարծիք յայտնեց «Ժառանգութիւն» խմբակցութեան ղեկավար Ստեփան Սաֆարեանը, ուստի՝ ազատ ընտրություններ անցկացնելու մարտահրաւէրը, նրա կարծիքով, պահպանուած է:

«Շատ կը ցանկանայի, որ ընտրությունների ազատ եւ արդար, հաւասար մրցակցային ընթացքը ապահովելու շահագրգռութիւնը դառնար մէկ այլ համախմբման հիմք՝ արագ արձագանքելու, համատեղ գործելու՝ այն իրավիճակներում, երբ իշխող կուսակցութիւնը կը փորձի գործի դնել ընտրությունների ժամանակ ընտրակարգից մինչեւ բոլոր տեսակի ռեսուրսների չարաշահումը», - լաւելեց նա:



ԼՈՒՐԵՐ

ՄԵԿՆԱՐԿԵՑԻՆ ՎԻՉԱՅԻ ԴԻՐԱՑՄԱՆ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Եւրոպայի եւ Հայաստանի միջեւ Վիզայի դիւրացման բանակցութիւններու մասնակիցները Երեւանի մէջ

«Եւրամիութիւնը միշտ էլ նշել է, որ առաջիկայ ընտրութիւնները պէտք է դիտարկուեն իբրեւ Հայաստանի համար հիմնական ստուգում՝ Հայաստան-Եւրամիութիւն հետագայ յարաբերութիւնների առումով: Սակայն սպասուող խորհրդարանական, ապա եւ նախագահական ընտրութիւններն այսօր մեկնարկած բանակցութիւնների հետ կապելը՝ ենթադրելով, թէ դրանք կարող են ազդել բանակցութիւնների ընթացքի վրայ, շահարկումների ոլորտից է», - պատասխանելով «Ազատութիւն» ռադիոկայանի հարցին՝ յայտարարեց Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավար, դեսպան Տրաիան Հրիստեան Հայաստանի ու Եւրամիութեան միջեւ մոտաքի արտոնագրերի դիւրացման եւ ռեադմիսիայի համաձայնագրերի շուրջ մեկնարկած բանակցութիւնները՝ Մնացականեանը չափազանց կարեւոր դնալով զանազան չափերի քաղաքական նշանակութիւնը:

«Այս բանակցութիւններն ունենալու են իրենց առանձնատուկ ընթացքը, ինչը կախուած է լինելու բանակցային իւրաքանչիւր փուլի արագութիւնից, քանի որ այստեղ հիմնական նպատակն է ունենալ յստակ եւ պատշաճ կերպով բանակցութեան համաձայնագիր: Այնպիսի համաձայնագիր, որը բխելու է այս փաստաթղթից օգուտ ակնկալող մարդկանց շահերից: Եւ այս առումով բնական է, որ բանակցող երկու կողմերն էլ յանձնառու են գործընթացը առաւել արագ աւարտելու գործում», - յաւելեց Հայաստանում Եւրամիութեան պատուիրակութեան ղեկավարը:

Նոյն հարցին ի պատասխան, Հայաստանի փոխարտգործնախարար, բանակցութիւններում հայկական կողմի պատուիրակութեան ղեկավար Զոհրաբ Մնացականեանը նշեց, թէ Հայաստանի յարաբերութիւնները Եւրամիութեան հետ ունեն բաւական կարեւոր հիմքեր:

«Այդ հիմքերը վերաբերում են համընդհանուր արժէքային համակարգին: Մենք այդ նոյն արժէքային համակարգի տարածքում ենք: Մենք յանձնառութիւն ունենք հասարակութեան, պետութեան մակարդակով կառուցելու ժողովրդավարական պետութիւն, եւ ընտրութիւնները այդ գործընթացի, այդ համակարգի ֆունկցիաներից մէկն են: Մենք բաւական յստակ արտայայտել ենք մեր մտադրութիւնները այդ հարցում: Իրօք, վստահ եմ, որ Եւրամիութեան հետ մեր օրակարգը կ'ունենայ իր բնականոն նորմալ զարգացումը», - ասաց Մնացականեանը:

Գնահատելով Հայաստանի ու Եւրամիութեան միջեւ մոտաքի արտոնագրերի դիւրացման եւ ռեադմիսիայի համաձայնագրերի շուրջ մեկնարկած բանակցութիւնները՝ Մնացականեանը չափազանց կարեւոր դնալով զանազան չափերի քաղաքական նշանակութիւնը:

Նշեց, որ մոտաքի վիզաների դիւրացման համաձայնագրով Հայաստանի քաղաքացիների համար կը նախատեսուեն Շենգենեան գոտու մոտաքի վիզաներ ստանալու դիւրացուած ընթացակարգեր: Այս շրջանակներում ԵՄ երկրներ պարզեցուած մոտաք է նախատեսուած մի շարք կատեգորիաների Հայաստանի քաղաքացիների համար, ինչպիսիք են պաշտօնական պատուիրակութեան անդամները, գործարարները եւ բիզնես կազմակերպութիւնների ներկայացուցիչները, լրագրողները, գիտնականները դպրոցականները, ուսանողները, եւ այլք: Նախատեսուած է նուազեցնել Շենգենի մոտաքի վիզաների գինը եւ կրճատել պահանջուող փաստաթղթերի ցանկը: Յետընդունման համաձայնագրով կարգաւորուելու է ԵՄ եւ Հայաստանի տարածքում առանց թոյլտուութեան բնակուող անձանց վերադարձի եւ յետընդունման ընթացակարգերը:

ՊՈԼՍՈՅ ՄԷՋ ՏԵՂԻ ՌԵՆԵՑԱԾ Է ՅԱԿԱՅԱՅ ՑՈՅՑ

Շարունակուած էջ 1-էն  
բաց ռատիկաններու կողմէ արգելքի հանդիպեցան:  
Յուցարարները, կը դատապարտէին Հայաստանը եւ իրենց գորակցութիւնը կը յայտնէին Ատրպէյճանին: Արեւմտեան լրագրողներ ապշած էին ցոյցի ընթացքին տիրած ազգայնամոլական զգացումներէն: «Այս ցոյցը գորակցութիւն կը վայելէ, ջատագովուած է եւ նիւթական աջակցութիւն ստա-

ցած է արտաքին գործոց նախարարութեան կողմէ», - կը գրէ ֆրանսական «Լը Մոնտ» օրաթերթի լրագրող Կիլյոմ Փերիէ եւ կը նշէ, որ ցոյցի ընթացքին ծայրայեղ ազգայնականները «Սարքոզի» մականիշով լուսցարանի թուղթեր բաժնած են: «Խոշալուի 600 գոհերը պատրուակ կը ծառայեն հակահայ առեւտրութեան գեղումին: 1915-ի կրակը տակաւին կը վառի», - կը գրէ «Լը Մոնտ» ի լրագրողը:

ԼՐԱՅԱՒ ՍՈՒՄԳԱՅԻԹԻ ԶԱՐԴԵՐԻ 24-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ

1988 թ. Փետրուարի 27-ին Բաքուից 20 կիլոմետր հեռավորութեան վրայ գտնուող Սումգայիթ քաղաքում աղբբեջանցիներն սկսեցին հայերի սպանողը, որն ուղեկցուած էր հայերի ունեցուածքի թալանով եւ ոչնչացմամբ:



Երեք օրում սպանուեց աւելի քան 100 մարդ, իսկ վիրաւորների թիւը տասնեակներով էր հաշուում: Ընդ որում սպանուածների մի մասը տանջամահ էր արուել, իսկ դիակներն այրել էին:

Փետրուարի 29-ին Սումգայիթ մտաւ խորհրդային բանակը: Սումգայիթի հայութեան կոտորածն առաջին էթնիկ բռնութիւններ էր ԽՍՀՄ-ի նոր պատմութեան մէջ եւ մեծ դեր ունեցաւ ինչպէս ընդհանուր ԽՍՀՄ փլուզման մէջ, այդպէս էլ Ղարաբաղեան պատերազմի բռնկման հարցում:

Սումգայիթի կոտորածի փաստի քողարկման եւ միջազգային հանրութեան ապատեղեկացման արդիւնքում Աղբբեջանի իշխանութիւնների կողմից շարունակուեց ուժեղ հակահայկական քարոզչութիւնը, ինչը հանգեցրեց 1990թ. Յունուարի Բաքուի կոտորածներին, որոնց գոհ գնացին հարիւրաւոր խաղաղ հայ բնակիչներ:

1988-1990 թթ. աղբբեջանական իշխանութիւնների կողմից իրականացուող հայերի զանգուածային ջարդերի արդիւնքում վտարանդի դարձաւ Աղբբեջանի գրեթէ ողջ հայկական համայնքը՝ առնուազն կէս միլիոն մարդ:

Կոտորածները պատասխան էին Լեռնային Ղարաբաղի հայ բնակչութեան խաղաղ ցոյցերի, որոնց պահանջն էր իրականացնել ինքնորոշման իրենց սահմանադրական իրաւունքը:

Յիշեցնենք, որ 1988թ. Յուլիսի 7-ին Եւրոպական Խորհրդարանի կողմից ընդունուել է Սումգայիթի կոտորածը դատապարտող բանաձեւ, որում, մասնաւորապէս, ասուած է.

«Նկատի ունենալով Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի՝ Հայաստանի մաս հանդիսանալու պատմական իրողութիւնը (մարզի բնակչութեան 80%-ը կազմում են հայերը), ինչպէս նաեւ 1923 թ.-ին այս մարզ՝ կամայական որոշմամբ Աղբբեջանին միացնելու հանգամանքը, ինչպէս նաեւ 1988 թ. Փետրուարին աղբբեջանական Սումգայիթ քաղաքում հայերի կոտորածը, եւ նկատի ունենալով, որ Աղբբեջանում վատթարացող քաղաքական իրավիճակի պատճառով տեղի ունեցան հայերի զանգուածային սպանութիւններ Սումգայիթում եւ բռնութիւններ Բաքուում, ինչի հետեւանքով հայերի համար վտանգաւոր է ապրել Աղբբեջանում, եւ դատապարտում է Աղբբեջանում հայ ցուցարարների հանդէպ բռնութիւններն ու ճնշումները»:

Աղբբեջանի իշխանութիւնները երբեք չեն դատապարտել Սումգայիթի ջարդերը:

Tert.am

ԱՂԲԵՋԱՆԻ ԻՍՐԱԵԼԻՑ 1,4 ՍԼՐԴ ԴՈԼԱՐԻ ՄՊԱՌԱՋԻՆՈՒԹԻՒՆ ԿԸ ԳՆԻ

Աղբբեջանն իսրայէլից 1,4 մլրդ դոլար ընդհանուր արժողութեամբ սպառազինութիւն կը գնի (համապատասխան պայմանագիրն արդէն ստորագրուել է իսրայէլեան Israeli Aerospace Industries (IAI) կորպորացիայի եւ Աղբբեջանի պաշտպանութեան նախարարութեան միջեւ):

Ռուսալեզու Izrus.co.il կայքը, վկայակոչելով իսրայէլեան լրատուամիջոցները, հաղորդում է, որ խօսքն անօդաչու թռչող սարքերի եւ հակաօդային պաշտպանութեան նոր համակարգերի մասին է:

Հաղորդում է, որ իսրայէլցի մասնագէտներն Աղբբեջան են ժամանելու՝ նոր համակարգերի

գործարկման հարցում աղբբեջանցի գործընկերներին օգնելու համար:

Անցած տարուայ Դեկտեմբերին Աղբբեջանի պաշտպանական արդիւնաբերութեան նախարար Երալ Զամալը յայտարարել էր, թէ իր գերատեսչութիւնը 2012թ. մտադիր է Aerostar եւ Orbiter-2M սպարանքանիշի 60 անօդաչու թռչող սարք արտադրել: Կայքն ընդգծում է, որ դրանց արտադրութեամբ զբաղուելու է Baku's Azad Systems Co. ընկերութիւնը, որն ստեղծուել է իսրայէլի եւ Աղբբեջանի կառավարութիւնների միջեւ ձեռք բերուած պայմանաւորուածութեան արդիւնքում:

Թաքսիմի մէջ կատարուած հանրահաւաքը բուռն քննադատութիւններու առարկայ դարձած է թրքական զանազան թերթերում մէջ, որոնց աշխատակիցները, դատապարտելով հանդերձ «Խոշալուի մէջ կատարուած սպանող», անընդունելի կը գտնեն այդ ոգեկոչման ընթացքին կատարուած

հակահայ գրգռութիւնները, ինչպէս նաեւ այն տգեղ վերտառութիւնն ու լօզունգները, որոնք գործածուեցան հանրահաւաքին ընթացքին:

Որոշ աղբբբեր կը պնդեն, թէ տեղի ունեցածը պետութեան ցուցմունքով ու քաջալերութեամբ իրականացած ձեռնարկ մըն էր:



### ԱՐԱԲԱԿԱՆ ԱՇԽԱՐՀ ՍՈՒՐԻՈՅ ՆՈՐ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆԸ ՎԱԲԵՐԱՑՈՒԵՑԱԲ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՆՐԱՔՈՒԷՈՎ

Փետրուարի 26ին Սուրիոյ Արաբական Հանրապետութեան տարածքին վրայ տեղի ունեցաւ երկրի բարեփոխուած նոր սահմանադրութեան ժողովրդային հանրաքուէն:

Սուրիոյ ներքին գործոց նախարարութեան պաշտօնական հաղորդագրութեան համաձայն երկրի բնակչութեան 90%-ը դրական պատասխան տուած է նոր սահմանադրութեան:

Ներքին գործոց նախարար Մուհամմատ Ալ Շար Իսմայիլ ընդհանուր առմամբ 8.4 միլիոն քաղաքացի գրանցուած էր քուէարկողներու ընդհանուր ցուցակին վրայ, որոնց 57.4 տոկոսը մասնակցած է հանրաքուէին:

Արդարեւ, նոր սահմանադրութեամբ վերջ կը տրուի միակուսակցական պետութեան դրութեան, որ ցարդ մենաշնորհն էր

Պատաս կուսակցութեան, 1963 թուականէն ի վեր: Նոր Սահմանադրութիւնը կ'արտօնէ բազմակուսակցութեան դրութիւնը եւ կը սահմանէ հանրապետութեան նախագահի պաշտօնավարութեան ժամկէտը:

Նշենք նաեւ որ երկրի ընդդիմադիրներն ու արեւմտեան շրջանակները կը մերժեն ընդունիլ նոր սահմանադրութիւնը: Միւս կողմէ Չինաստանն ու Ռուսաստանը, Երկուշաբթի օր, ողջունած են բարեփոխուած նոր Սահմանադրութիւնը, որպէս նոր քայլ մը դէպի ժողովրդավարութիւն:

Ներկայիս Սուրիոյ ընդհանուր բնակչութիւնն է 20,446,609: Սիւնիները կը կազմեն այս թիւին 74%-ը, ալաւիները 12%-ը, քրիստոնեաները 9%-ը, իսկ տիւրքիները 3%-ը:

### ԵՄԵՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆՈՐ ՆԱԽԱԳԱՅԸ

Անցնող շաբթուան ընթացքին Եմէն ընտրեց իր հանրապետութեան նոր նախագահը՝ Ապրտ Ռապո Մանսուր Հատին: Երկրի նախկին նախագահը Ալի Ապտուլլահ Սալէհը, պաշտօնական արարողութեամբ մը (դրօշակի տըւելով) իշխանութիւնը փոխանցեց իր յաջորդին, Ապրտ Ռապո Մանսուր Հատին:

Փոխանցման ձեւակերպութիւնը տեղի ունեցաւ Երկուշաբթի Փետրուարի 27ին, 2012, մայրաքաղաք Սանաայի նախագահական պալատին մէջ:

Այսպիսով արիւնալի յեղափոխութեամբ մը, վերջ կը տրուի Սալէհի մենատիրական իշխանութեան, որ տեւեց 33 տարի: Կ'ըսուի թէ նախկին նախագահը կը ծրագրէ մեկնիլ Եթովպիա եւ հոն հաստատուիլ, իր ընտանիքի քանի մը անդամներուն հետ:

Եմէնի նոր ղեկավարը նախկին Հանրապետութեան նախագահի փոխանորդն էր եւ ընտրուած է քուէարկողներու 99.8 տոկոսը շահելով, առանց հակառակորդ թեկնածու մը ունենալով...: Իր անդրանիկ ճառին մէջ նախագահ Հատին՝ խոստացած է նուիրուիլ երկրի վերակառուցման աշխատանքին եւ պայքարիլ «Ալ Քաիտա»ի դէմ:

### 80 ՀԱՉԱՐ ՍՈՒՐԻԱՑԻՆԵՐ ՅՈՐԴԱՆԱՆԻ ՄԷՋ

Վերջին իրադարձութիւններու հետեւանքով բազմահազար սուրիացիներ ճամբորդած են դէպի յորացի երկիրներ, ժամանակաւոր բնակութեան համար: Այս առթիւ կ'ըսուի թէ շուրջ 80 հազար սուրիացիներ Յորդանան կը գտնուին: Իսկ բազմահազար վիրաւորներ Լիբանան ժամանած են եւ կը դարձանուին տարբեր շրջաններու հիւանդանոցներու մէջ:

### ՍԵՅՐԱՆ ՕՐԱՆԵԱՆ ԵՒ ՆԱԹՕ

Շարունակուած էջ 1-էն

գործունակ կարողութիւններու կատարելագործումը, պաշտպանական ծրագրաւորման եւ բիւջետաւորման ոլորտի բարեփոխումները, ինչպէս նաեւ ՆԱԹՕ-ի ղեկավարած գործողութիւններուն հայ խաղաղապահներու մասնակցութիւնը:

Կողմերը արձանագրած են պաշտպանական բարեփոխումներու եւ ռազմական համագործակցութեան հիմնական ոլորտներուն մէջ

ՀՀ պաշտպանութեան նախարարութեան յառաջընթացը, նշուած են յառաջիկայ տարիներուն Հիւսիսատլանտեան Դաշինքի հետ համագործակցութեան գերակայ ուղղութիւնները:

Դեսպան Դիրիոզ յայտնած է ՆԱԹՕ-ի պատրաստակամութիւնը՝ պաշտպանութեան ոլորտին ներս Հայաստանին տրամադրուող խորհրդատուական եւ փորձագիտական աջակցութեան հետագայ ընդլայնման վերաբերեալ:

### ԳԱԼԻՖՈՐՆԻՈՅ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐԸ ԿԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒՆ 2013Ի ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԵԱՆՑ



Յառաջիկայ տարի Լիբանանի մէջ կայանալիք Երեսփոխանական ընտրութիւններուն համար այժմէն իսկ նախապատրաստական աշխատանքներ կը կատարուին թէ երկրէն ներս եւ թէ արտասահմանի տարբեր գաղութներու մէջ:

Նախկին լիբանանցիներու մեծ գաղութ մը կայ նաեւ Հարաւային Գալիֆորնիոյ մէջ, որոնք 2009 թուականին Պէյրութ մեկնելով, մասնակցեցան երկրի երեսփոխանական ընտրութիւններուն:

Այս կապակցութեամբ, անցեալ Հինգշաբթի, Փետրուարի 23ին, 2012, Տաունի քաղաքի «Էմպէսի Սուիթս» հիւրանոցի սրահներէն մէկուն մէջ տեղի ունեցաւ նախընտրական հաւաք մը:

Մարօնիթ համայնքին կողմէ կազմակերպուած սոցն հաւաքին իրենց մասնակցութիւնը բերած էին, տեղուց Լիբանանի հիւպատոս Երիկ Մատոնա Ղազալ, այս օրերուն ԱՄՆ այցելող Լիբանանի նախկին ներքին գործոց նախարար Ջիտտ Ապպուտ, ինչպէս նաեւ Յառաջդիմական Ընկերվար, «Թայպր էլ Մուսթաքպալ», «Լիբանանեան Ոյթեր», Ս.Դ. Հնչակեան կուսակցութեան պատուիրակութիւններն

ու մարօնիթ համայնքի տարբեր կազմակերպութեանց ներկայացուցիչներ ու այլ արաբ անձնաւորութիւններ:

Զայտան Վարդապետի բացման խօսքէն ետք ելոյթներ ունեցան Տօքթ. Իլիաս Այուպ, հիւպատոս Երիկ Մատոնա Ղազալ եւ նախկին նախարար՝ Ջիտտ Ապպուտ: Բոլորն ալ շեշտը դրին օրուան հիմնահարցին վրայ, որ է նախապատրաստուիլ 2013 թուականին, Լիբանանի մէջ կայանալիք Երեսփոխանական ընտրութիւններուն: Արդարեւ, արտասահմանի մէջ բնակող լիբանանցիները պիտի կարենան քուէարկել իրենց բնակած երկիրներու Լիբանանեան դեսպանատուններն ու հիւպատոսարանները անձամբ երթալով: Ընտրութեանց մասնակցելու համար պայման է որ ենթակաները օրինաւոր փաստաթուղթերով ներկայանան՝ քուէատուփերը: Պայման է նաեւ որ ենթականերուն անցագիրները վերանորոգուած ըլլան մինչեւ Դեկտեմբեր 31, 2012: Իսկ որեւէ փաստաթուղթ չունեցող լիբանանցիները հարկ է որ դիմեն առ որ անկէ, ստանալու համար անձնաթուղթի պատճէնը («Իրաթ էլ քայտ»):

**ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ**  
**ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԵՈՒԻ ԸԱՍԱՐ)**  
**ԱՄԵՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՍԱՐ**  
**1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104**  
**ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԸՆՈՒՁԱՅՆԵԼ**  
**(626) 797-7680**

**Bedros S. Maronian**  
818/500-9585

**Siamanto B. Maronian**  
818/269-0909

**SERVING THE COMMUNITY SINCE 1975**  
*More locations and more ways to service your insurance and financial needs*

<p>6300 Wilshire Blvd. Suite 1900 Los Angeles, CA 90048</p> <ul style="list-style-type: none"> <li>- Life Insurance</li> <li>- Health Insurance</li> <li>- Group &amp; Individual</li> <li>- Long Term Care</li> <li>- Disability</li> </ul>	<p>805 East Broadway Glendale, CA 91205</p> <ul style="list-style-type: none"> <li>- Estate Planning</li> <li>- Will &amp; Living Trust</li> <li>- Full Annual Review</li> <li>- Mortgage Protection</li> <li>- College Planning</li> </ul>	<p>300 N. Lake Ave. Suite 500 Pasadena, CA 91101</p> <ul style="list-style-type: none"> <li>- Workman's Compensation</li> <li>- Employee Benefits</li> <li>- Annuity</li> <li>- IRA</li> <li>- 401K &amp; 403B</li> </ul>
--	---	---

**A.A.A. INSURANCE SERVICES**

**Insurance coverage can help you financially!**  
**Ապահովագրութիւնը Անհրաժեշտ է**

*Coverage & Protection should be on the top of your priority list.*

**Seniors 65 & Up** Medicare Supplements • Insurance • Prescriptions Drugs RX • Benefits



# «ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԳՏՆԵՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՈՒՂԻՆ, ՈՐԸ ՀԱՍԱՐՈՒՆՉ Է ՁԵՐ ՇԱՅԵՐԻՆ».- ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՊԱՆ

Հայաստանում Գերմանիայի դեսպան Հանս-Եռնան Շմիդթը Tert.am-ին բացառիկ հարցազրույց է տուել «Ժառանգութիւն» կուսակցութեան՝ Եւրոպայի ժողովրդական կուսակցութեան դիտորդ անդամի կարգավիճակով անդամակցելու կապակցութեամբ հրաւիրուած ընդունելութեանը:

«Պարոն դեսպան, Դուք ակտիւ էք Հայաստանի ներքաղաքական կեանքում տեղի ունեցող իրադարձութիւններին Ձեր մասնակցութեամբ. ներկայ էք լինում ընդդիմութեան հանրահասարակական քննարկմանը, մեր քաղաքական ուժերի կազմակերպած միջոցառումներին: Ծանօթ էք այն գնահատականներին, որոնք հնչեցին Փետրուարին Հրազդանում եւ մի շարք տեղական ինքնակառավարման մարմինների ընտրութիւնների վերաբերեալ գնահատականներին: Ինչպէ՞ս կը գնահատէք այն միտումները, որոնք տեղ գտան այս ընտրութիւններում:

- Դժուարանում եմ հանգամանալից պատասխան տալ, որովհետեւ ես արտասահմանում էի՝ արձակուրդում, ես միայն ծանօթ եմ արդիւնքներին, լսել եմ որոշ արձագանքներ ու մեկնաբանութիւններ՝ եւ՛ դրական, եւ՛ քննադատական: Մենք հետեւում ենք Հայաստանում ներքաղաքական իրավիճակի զարգացմանը եւ շատ եմ կարեւորում, որ ձեր երկիր-

ընտրութեանը է այս ընտրութիւնների մոնիտորինգով: Նաեւ կարեւորում եմ, որ Հայաստանի գործադիր իշխանութիւնը մշտապէս բարձրաձայնում է ընտրութիւնները որքան հնարաւոր է՝ արդար ու թափանցիկ անցկացնելու անհրաժեշտութեան եւ այն մասին, որ միջազգային եւ տեղական դիտորդներին պէտք է տրուի ընտրութիւնների գործընթացը դիտարկելու հնարաւորութիւն: Հնչում է նաեւ, որ այս ընտրութիւնները պէտք է դրական առումով տարբերուեն նախորդ եւ այդ թուով՝ 2007-ի խորհրդարանական ընտրութիւններից: Կարեւորում եմ, որ Հայաստանը կարողանայ դիմակայել այս ընտրութիւնները որքան հնարաւոր է՝ լաւ եւ միջազգային չափանիշներին համապատասխան անցկացնելու մարտահրաւէրին, քանի որ Հայաստանը հետաքրքրուած է Ասոցացման (Համաձայնագրի) բանակցութիւններում համաձայնագրի ընդունումն արագացնելու հարցում: Իսկ այս համաձայնագրում մեծ դեր է վերապահուած մարդու իրաւունքների եւ ժողովրդավարացման խնդիրներին:

«Կարծում էք, որ ընտրութիւններն իրօք կը լինեն ժողովրդավարական, թէ սրանք սոսկ յայտարարութիւններ են մտադրութիւնների մասին:

- Ես լաւատես եմ, եւ օրինակ՝

այսօր մենք բոլորս ներկայ ենք Եւրոպայի ժողովրդական կուսակցութեանը մի քանի կուսակցութիւնների դիտորդի կարգավիճակով անդամակցելու կապակցութեամբ հրաւիրուած ընդունելութեանը: Եթէ օրինակ՝ Հայաստանի պետական կառուցուածքի մաս կազմող երկու քաղաքական ուժերը որպէս գործադիր իշխանութիւն (խօսքը կոալիցիոն ՀՀԿ-ի եւ ԲՀԿ-ի մասին է - Tert.am) քիչ թէ շատ դրական շարձազանք են այս մարտահրաւէրին, ապա կարծում եմ՝ արձագանքը բացասական կը լինի: Այնպէս որ, կարծում եմ՝ Հայաստանի պետութեան շահերից է բխում այս մարտահրաւէրին դրական պատասխան տալը: Ես լաւատես եմ:

- Մեզ մօտ Հայաստանում կայ մտայնութիւն, որ Արեւմուտքն այստեղ ինչ-ինչ կուսակցութիւնների հետ կապուած ինչ-ինչ հետաքրքրութիւններ ունի, եւ օտարերկեայ այս կամ այն դեսպանի ներկայութիւնն այս կամ այն քաղաքական ուժի գրասենեակում ինքնին երաշխիքն է նրա, որ տուեալ քաղաքական ուժը ներկայացուած է լինելու ապագայ խորհրդարանում: Օրինակ՝ երբ ԱՄՆ երկու՝ նախկին եւ ներկայ դեսպաններն այցելեցին Ազատ դեմոկրատների գրասենեակ, նման տեսակէտ հայաստանեաց յայտնի քաղտեխնոլոգներից մէկը: Ձեր



մեկնաբանութիւնը:  
- Ես կ'առաջարկէի այս հարցում մի քիչ զգուշ լինել. միգուցէ հետաքրքիր է, թէ ինչպէս կարելի խթանել օրինակ՝ այնպիսի երկրների դեսպանների, ինչպիսիք են ԱՄՆ-ը կամ ԵՄ անդամ երկրները, հետաքրքրութիւնը գործընթացում, որը կոչւում է Հայաստանի ժողովրդավարացում: Սա ձե՛ր հասարակութիւնն է եւ ձե՛ր խնդիրն է՝ խթանանել կուսակցական կառուցները, որոնք արտացոլում են ձեր հասարակութեան շահերը: Ես կարծում եմ՝ մեծ սխալ է մշտապէս ճնշումներ գործադրել գործադիր իշխանութեան վրայ, արձագանքել միշտ այսպէս, այլ ոչ այլ կերպ: Երբ ես տարիներ առաջ աշխատում էի Ուկրաինայում, չեմ ցանկանում մեկնաբանել, թէ ինչ կատարուեց այս երկրում վերջին

Շաբ.ը էջ 18

## ՆԱԽԱԳԱՅԻ ԶԱԽՈՂՈՒՄԸ

### ՓԱՍՏԱԲԱՆ ԿԱՐԷՆ ՄԵԺԼՈՒՄԵԱՆ

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսեանը 2008թ. աշնանը ՀՀ դատական համակարգի վերաբերեալ նախաձեռնութիւն ցուցաբերեց՝ փաստելով, որ «արդարադատութեան իրականացման որակը մեր երկրում խիստ կաղում է», որ «դատարանների նկատմամբ լուրջ դժգոհութիւն կայ», որ «Սա այն բնագաւառն է, որտեղ դանդաղ կոտորութիւնը կամ անլուրջ վերաբերմունքը չի կարող հանդուրժուել: Համապատասխան կամքի առկայութեան մասին ես արդէն հրապարակաւ յայտարարել եմ. եկել է գործելու ժամանակը: Եւ ես խիստ որոշակի արդիւնքներ եմ ակնկալում տեսնել», «Այսուհետ դատարանները գնահատուածներին ընթացքը գնահատելու համար ցուցանիշ է լինելու համակարգի հանդէպ հասարակական վստահութեան գնահատականը»:

Թեւեակոխել է նշուած նախաձեռնութեան չորրորդ տարին եւ տեսնենք առկա՞ց են արդեօք խիստ որոշակի արդիւնքները, հանրութեան վստահութիւնը դատարանների նկատմամբ բարձրացե՞լ է արդեօք:

Յաւօք՝ ո՛չ: Եւ պէտք է փաստել, որ առկայ է Հանրապետութեան Նախագահի ձախողումը, նրա կամքի չիրագործումը եւ անլուրջ վերաբերմունքի հանդուրժումը:

Նշուածի ապացոյցն են ոչ միայն կառավարութեան նախաձեռնութեամբ անցկացուած սոցիոլոգիական հարցումների արդիւնքները, այլեւ թեմայի վերաբերեալ տարիներ մի քանի անգամ Նախագահի մօտ անցկացուող քննարկումների ժամանակ Նախագահի գնահատականները: Օրերս արդարադատութեան նախարար Հրայր Թովմասեանն իր հերթին լրատուամիջոցների մօտ յայտարարեց, որ այժմ դատարանների նկատմամբ անվստահութիւնը կազմում է 70-80 տոկոս եւ պէտք է հասնել նրան, որ այդ տոկոսը իջնի մինչեւ 40-ի, իսկ յետագայում մինչեւ 20-ի:

Փաստօրէն անցել է 4 տարի, սակայն պատկերը նոյնն է, եթէ ոչ աւելի վատը: Ո՞վ է մեղաւոր Նախագահի նախաձեռնութեան նման ձախողման համար: Կարծում եմ, առաջին հերթին Նախագահը, դանդաղ կոտորութիւնը կամ անլուրջ վերաբերմունքը չհանդուրժելու մասին յայտարարելով, սակայն, հանդուրժելով, նաեւ դատական համակարգի ղեկավարները, որոնց համապատասխան պաշտօններին է նշանակել նոյն Նախագահը:

Այժմ իմ գործերից բերեմ մի քանի օրինակ, որոնցից տեսանելի կը լինի, թէ հասարակութիւնն ինչու չի վստահում դատարաններին: Յիշեցնեմ, որ Հանրապետութիւնում աւելի քան 1000 փաստաբան կայ եւ պատկերացնել կարելի է, թէ քանի նման օրինակ:

Դաւիթ Փոլադեանի գործի մասին բազմաթիւ հրապարակումներ են եղել, ասուլիս է արուել, Նախագահին ուղղուած դիմումներ են գրուել: Ինչու՞ն էր բանը. Դաւիթ Փոլադեանը գումարի պահանջով դատական վէճ ունէր եւ վէճը լուծում էր ստացել երեք դատական ատեանների կողմից ու վճռի կատարման փուլն էր: Վճիռներով հաստատուած մօտ 350.000 ԱՄՆ տոլար պարտքի դիմաց Փոլադեանին առաջարկուած է 200.000 ԱՄՆ տոլար, զգուշացնելով, որ եթէ չհամաձայնուի, ապա ամէն ինչ

փոխուելու է: Փոլադեանը առաջարկին չհամաձայնուեց եւ հաս թէ ինչ եղաւ:

Այն գործարքը, որի վերաբերեալ օրինական ուժի մէջ մտած վճիռներ կային, որոնցով հաստատուած էր, որ կողմերի միջեւ կնքուած համաձայնագիրը «վերաբերելի եւ չստակ տեղեկութիւններ է պարունակում», «արտայայտում է կողմերի համաձայնութիւնը եւ կամքը» եւ «Այվագեանը անվերապահօրէն ընդունել է, որ դրանից յետոյ որեւէ պարտք եւ պահանջ չի ունենալու եւ չի ներկայացնելու Դ. Փոլադեանի հանդէպ», դատարանի կողմից անվաւեր ճանաչուեց, պատճառաբանութեամբ, որ Այվագեանը մոլորութեան ազդեցութեան տակ է կնքել:

Յստակ տեղեկութիւններ պարունակող, կողմերի համաձայնութիւնը եւ կամքը արտայայտող եւ համաձայնագրի պայմաններն անվերապահօրէն ընդունուած գործարքը չի կարող մոլորութեամբ կնքուել, բայց դատարանը այդպէս համարեց եւ սա այն դէպքում, երբ գործարքին ներկայ 4 անձինց 3-ը ասում են հակառակը: Մի բան էլ ասեմ, դատարանը իր վճռում ընդհանրապէս չանդրադարձաւ օրինական ուժի մէջ մտած դատական ակտերին, կարծես թէ այդպիսիք չեն եղել եւ դատարանին չեն ներկայացուել:

Նշուած վճիռը առաջին ատեանի դատարանը կայացրեց նախագահի 2008թ. աշնանային նախաձեռնութիւնից օրեր անց:

Այդ ժամանակ ասուլիս արեցինք, մամուլում հրապարակումներ եղան, դիմում գրուեց Նախագահին, ներկայացնելով իրավիճակը եւ ասելով, որ կատարուածը դատական համակարգի պատասխանն է Նախագահի նախաձեռնութեանը եւ եթէ արձագանք չունեն-

նայ, ապա մեզ այդքան ոգել որած բարեփոխումների նախաձեռնութիւնը ձախողուելու է:

Ինչ էք կարծում, ինչ պատասխան եղաւ: Ոչ մի: Այդ դատական ակտը թէեւ բողոքարկուեց, բայց մնաց ուժի մէջ:

Կարծում եմ, դժուար չէ կուսել, թէ սպիտակը սեւ ացնելու մէջ մասնագիտացած դատաւորներն ինչպէս էին «արդարանում». հրահանգը գալիս է նախագահականից, իրենք ոչինչ չեն կարող անել:

Այս գործը մինչ օրս շարունակուած է, բայց դէ Նախագահի նախաձեռնութեան տապալումը փաստ է:

Սիրվա Ասատրեանի ողիսականի մասին շատ է գրուել, չի շեցնեմ, որ նրա գործով Մարդու իրաւունքների եւրոպական դատարանը արդէն իսկ ՀՀ-ի դէմ մէկ վճիռ կայացրել է, երկու գործ էլ վարույթում է, իսկ Սահմանադրական դատարանն էլ չորս անգամ հակասահմանադրական է ճանաչել Սիրվա Ասատրեանի գործով կիրառուած օրէնքները, սակայն, նա ապօրինաբար պահուած է անազատութեան մէջ:

Սիրվա Ասատրեանը իր նկատմամբ կիրառուած ազատագրկումը կրում է «Արդեան» ՔԿՀ-ում: Մօտ եօթ տարուայ ազատագրկումից յետոյ նրա ուղղիչ հիմնարկի ռեժիմը կիրառեցից փոխուեց բաց ռեժիմի եւ նա հնարաւորութիւն ստացաւ ցերեկային ժամերին ուղղիչ հիմնարկից դուրս գալ: Սակայն դա տեսնեց ընդամէնը քսան օր, որից յետոյ ռեժիմը կրկին խստացուեց: Օրէնքը ռեժիմի խստացման ընդամէնը երկու դէպք է սահմանում՝ 1) երբ անձը անձամբ դիմել է խստացնելու համար կամ 2) երբ խախտում է թոյլ տուել: Սիրվա

Շաբ.ը էջ 18



# ՎԱՐԴԱՆԱՔ

Յաւ ի սիրտ անհանգստութեան պատճառով ընկ. Յակոբ Փոքրաւորեան ներկայ չկարողացաւ գտնուիլ այդ երեկոյ, բայց անկասկած որ անոր սիրտն ու հոգին կը թեւածէին այդ րոպէին Կիլիկեան ճեմարանի Մանկապարտէզի բաժնի նուիրական երգիքին ներքեւ: Անոր յուշանուէրը յանձնուեցաւ իր իսկ բնակարանին մէջ ճեմարանի հոգաբարձութեան կողմէ իրեն

շնորհուած շնորհակալական եւ քաղաքավարական այցելութեամբ մը:

Հուսկ այս տեղի ունեցաւ 90 ամեակի կարկանդակի հատման պաշտօնական արարողութիւնը ձեռամբ բոլոր օրուայ գնահատողներու ու պարգեւատրեալներուն, այս ներկաները հրաւիրուեցան շրջաքայելու եւ ականատես ըլլալու մանկապարտէզի վերանորոգուած բաժնիներն ու սենեակները:

Փառք անմահ լուսոյ տաճար Կիլիկեան ճեմարանի 90 ամեակին:



**ԿԻԼԻԿԵԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ  
ՀԱԼԷՊԻ ԿԻԼԻԿԵԱՆ ՎԱՐՄԱՐԱՆԻ  
90 ԱՄԵԱԿ**

**ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ – ՃԱՇԿԵՐՈՅԹ**

Հովանաւորութեամբ՝  
**ԳԵՐՇ. Տ. ՅՈՎԿԱՆ Ս. ԱՐՔ. ՏԷՐՏԷՐԵԱՆԻ**  
Առաջնորդ Արեւմտեան Թեմի

Նախազանրութեամբ՝  
**ԳԵՐՇ. Տ. ԱՐՄԱՇ Ս. ԵՊՍ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆԻ**  
Առաջնորդ Դամասկոսի Թեմի  
— Գեղարուեստական Յայտագիր —

ԿԻՐԱԿԻ, ՄԱՐՏ 11 2012, Կ. Ե. ԺԱՄԸ 3-ԻՆ  
ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ «ԳԱԼԱՅԾԵԱՆ» ՍՐԱՀԻՆ ՄԷՋ  
3325 N. Glenoaks Boulevard, Burbank

Մուտքի նուէր՝ \$50

---

Նոյն օրը Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի մէջ,  
(3325 N. Glenoaks Blvd., Burbank)  
պիտի պատարագէ և քարոզէ

**ԳԵՐՇ. Տ. ԱՐՄԱՇ Ս. ԵՊՍ. ՆԱԼՊԱՆՏԵԱՆ**  
Առաջնորդ Դամասկոսի Թեմի

Սիրով հրաւիրուած է Հայ ժողովուրդը



### ԼՈՍ ԱՆՃԵԼՈՍԻ ՀԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ



#### ԼԻՆՏԱ ԳԱՆՏԻԼԵԱՆ

Լոս Անճելլոսի Հայ Քոյրերու վարժարանի աշակերտութիւնը Հինգշաբթի, 16 Փետրուար 2012ի առաւօտեան համախմբուած էր Հ. Ք. Վարժարանի «Դանիէլեան» սրահը ներկայ գտնուելու Սուրբ Պատարագի, աղօթելու համար վարդան Մամիկոնեանի եւ հազար երեսուն վեց նահատակներու հոգիներուն, որպէսզի խրախուսուելով անոնց կամքի գորութեանն՝ շարունակեն ապրել մեր պապերու ուղիով քրիստոնէական կեանք մը:

Օրուան պատարագին էր կլենտէյլի Հայ Կաթողիկէ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Եկեղեցւոյ փոխ ժողովրդապետ Արմենակ Վարդա-

լերգները, ապա վարժարանի տնօրէնուհի՝ Առաքինագարդ Քոյր Լուսիա իր բացման խօսքով նախ պատմականը ըրաւ 451 թուականին տեղի ունեցող միօրեայ այն ճակատամարտին, որ դարերով մեզ առաջնորդեց ապրելու Քրիստոսով՝ հայոց արժանավայել կեանք մը եւ շարունակեց ըսելով «... Որովհետեւ կռիւր կրօնքի կռիւր էր, մինչեւ այսօր զայն կը տօնէ հայ եկեղեցին եւ հայ ազգը, անոնք նահատակուեցան իրենց հաւատքը հաստատուն պահելու համար եւ որպէսզի մենք ալ մեր նախորդներուն արժանի ժառանգորդները ըլլանք պէտք է հետեւինք իրենց քայլերուն եւ ապրինք քրիստոնէական կեանք մը»: Օրուան հան-



պետ Պետրոսեան, որ պատշաճ քարոզով մը յորդորեց աշակերտները լեցուելու նախնիներու հաւատքի ու ժողով եւ զանոնք նախապատրաստեց կէսօրէ ետք տեղի ունենալիք հանդիսութեան, ապա բոլոր աշակերտները երրորդ դասարանէ վեր հաղորդուեցան եւ բաժնուեցան սրահէն «Նորահրաշ» շարականի երգեցողութեամբ: Պատարագին կը սպասարկէին Ութերորդ դասարանի աշակերտները՝ Սուրբ Սեդանին ծառայելով եւ ընթերցուածներ ու խնդրանքներ կարդալով:

Կէսօրէ ետք տեղի ունեցաւ պաշտօնական հանդիսութիւն. «Դանիէլեան» սրահը այս անգամ պատրաստ էր ներկայացնելու աշակերտներու այդ օրուան յատուկ պատրաստած ոտանաւորները, շարականները, երգերը եւ թատերադրութիւնը:

Հանդիսութիւնը ընթացք առաւ «Նորահրաշ» շարականի երգեցողութեամբ, որմէ ետք աշակերտները խանդավառութեամբ հնչեցուցին Հայաստանի Հանրապետութեան եւ վարժարանի քայ-

դիսավար Տիկ. Մարո Գուլուսեանի բացատրեց օրուան խորհուրդը, ապա յաջորդաբար բեմ հրաւիրեց մանուկապարտէզէն մինչեւ ութերորդ դասարանի աշակերտները, որոնք իրենց ստրված ոտանաւորներով եւ երգերով ստեղծեն խանդավառութիւն եւ առիթ ունեցան իրենց ծնողներուն հիւրերուն եւ դասընկերներուն ներկայութեան ցուցադրելու իրենց բեմական շնորհները: Իսկապէս բոլորն ալ շատ յաջող ձեւով ներկայացան, արտասանեցին եւ երգեցին հայրենասիրական խանդավառ եւ վարդանանց քաջերու նուիրուած խրախուսիչ երգեր, որոնք բեմադրուին ընտրուած եւ պատրաստուած էին վարժարանի երաժշտութեան ուսուցչուհի Տիկ. Վարդուհի Պաղտասարեանի կողմէ:

Յայտագրի ամենէն հետաքրքրական եւ սպասուած բաժինը վերջաւորութեան երրորդ դասարանի աշակերտներու վարդանանց ճակատամարտի ներկայացումն էր:

Թատրոնը սկսաւ ներկայաց-

### ԱՐՈՒԵՍՏԱԲԱՆ ՇԱՐԷՆ ԽԱՉԱՏՐԵԱՆ ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ «ԵՂԵՆԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ ՀԱՅ ԳԵՂԱՆԿԱՐՉՈՒԹԵԱՆ ՄԷՋ»

Կազմակերպութեամբ Գալիֆորնիայի Հայ Գրողներու Միութեան եւ Ստեֆանի Արուեստի Պատկերասրահին, Հինգշաբթի, փետրուարի 23ին, երեկոյեան ժամի 6ին, Կլենտէյլի Հանրային Գրադարանի սրահին մէջ, 222 E. Harvard St, Glendale CA 91205, տեղի ունեցաւ «Եղեռնի անդրադարձը հայ գեղանկարչութեան մէջ» բնանիւթով դասախօսութիւն, սահապատկերների ցուցադրութեամբ, Հայաստանի Հանրապետութեան Վաստակաւոր Գործիչ, արուեստաբան Շահէն Խաչատրեանի կողմէ: Ստեֆանի Արուեստի Պատկերասրահին տէր եւ տնօրէն Տի. Լինդա Ստեֆանեանը հակիրճ նախաբանով ներկայացուց դասախօսը: Ապա բանաստեղծ Գէորգ Քրիստինեանը հանդիսավարեց երեկոն:

Շահէն Խաչատրեանը իր կրթութիւնը ստացած է Պետերզբուրգի Գեղարուեստական Ակադեմիային մէջ, աւարտելով որպէս արուեստաբան: Երեւանի մէջ եղել է Մարտիրոս Սարեանի նորաստեղծ թանգարանին տնօրէն. միաժամանակ 1990 թուականին նշանակուած է Հայաստանի Ազգային Պատկերասրահին տնօրէն: Իր գործունէութիւնը, բացի արուեստագիտական տասնեակ աշխատու-

թիւններէ, եղել է նուիրում նկարահաւաքման, որով կրցած է Երեւանի թանգարանին համար 400 գեղանկարչական գործեր ձեռք բերել, ինչպէս Յ. Ալվազովսկու 9ը նշանակաւոր գործերը, Մ. Սարեանի 70 գործերը, եւ տասնեակ այլ գեղանկարներ: Շահէն Խաչատրեանը ուսումնասիրական բազմաթիւ յօդուածներով եւ հեռուստացուցային ելոյթներով ներկայացուցած է հայ գեղարուեստի պատմութիւնը: Նրա մենագրութիւնը Ալվազովսկիի մասին արժանացել է առաջին կարգի շքանշանի Մոսկուայի մէջ:

Հայոց Մեծ Եղեռնի 95ամեակին է նուիրուած նրա «Ծովի գոյն» հատորը, ուր ներկայացուած են այն հայ գեղանկարիչները, որոնք հանդէս են եկած ցեղասպանութեան բնանիւթերով: Սկսեալ 1895 թուականի կոտորածներէն՝ չորս սերունդի հայ գեղանկարիչներ են ներառուած հատորին մէջ: Պէտք է ըսել, որ Շ. Խաչատրեանը առաջին արուեստաբանն է, որ դասախօսութեան նիւթ կ'ընէ նման բնանիւթ:

Գեղարուեստական բաժնում ելոյթ ունեցաւ Երկնային Տաղեր Համոյթը սրինգահար Սալիբի եւ քնարահար Սօսիի կատարողութեամբ, երաժշտական մեծ հաճոյք պարգեւելով ներկաներուն:

### ՆԱՐԻՆԷ ՇԱՐՊԱԶԵԱՆԻ ՄՕՏԱԼՈՒՏ ՀԱՄԵՐԳԻՆ ԱՌԻԹՈՎ

Հայկական ժողովրդական երաժշտութիւնը ինչպէս եւ բանահիւսութիւնն ու ժողովրդական ստեղծագործութեան միւս ճիւղերը, իր միագումարի մէջ խիստ բազմազան է, տարատեսակ ու տարբեր: Հայկական ֆոլկլորային երգերը թեմատիկայի տեսակէտից չափազանց բազմազան են, արտացոլում են ժողովրդի կեանքն ու քրտնաթոր աշխատանքը, նրա սէրն ու հիացմունքը հայրենի բնաշխարհի հանդէպ, նրա մտքերն ու յոյզերը, անխնայ ծալքը եւ մեղմ հումորը, նրա ոգու ուժն ու հոգու գեղեցկութիւնը, պատմական իրադարձութիւնները: Մայիսի 20ին, երեկոյեան ժամը 6ին, Sheraton Universal Hotel-ի մեծ համերգասրահում եւս մէկ առիթ է վայելել մեր հայկական հին ժողովրդական երգերը, որոնք կը հնչեն գեղարուեստական բարձր մակարդակով: Բացի դրանից նրանք կը ներկայացուեն իրենց բանահիւսական, ազգագրական եւ պապենական ոճի մէջ: Բարձրաճաշակ մշակմամբ ու կատարողական բարձր արուեստով կը ներկայանայ մեզ շատ յարգելի, հարազատ դարձած Նարինէ Շահբազեանը, յիշուի մեծ է Նարինէ Շահպազեանի ծառայութիւնը հայրենի երգարուեստին: Նա մոռացութիւնից փրկել է բազմաթիւ երգեր, դրանց կողքին տուել է նաեւ յայտնի երգերի նոր հետաքրքիր տարբերակներ, որոնք նոյնպէս գիտական հետաքրքրութիւն են ներկայացնում: Նա իր հայրենի վասպուրականում տարածուած ժողովրդական երգերի կողքին ներկայացնում է նաեւ հարեւան գաւառների տարբերակները: Նարինէ Շահբազեանը սոսկ երգչուհի չէ, այլ բարձրաճաշակ, զգայուն կատարող է:



Բնութիւնը շուրջօրէն օժտել է նրան նուրբ լսողութեամբ, մեծ երաշխտականութեամբ, թաւշեայ գեղեցիկ տեմբերով: Շատ շատերն են ծանօթ նրա կատարմանը, նրա կատարողական ոճին:

Երգերի գերակշռող մասը պատկանում է վասպուրականին: Սակայն, այդ օրը առիթ կ'ունենանք ունկնդրել երգեր, որոնց ծագումը ստոյգ տուեալների համաձայն, կամ ամենայն հաւանականութեամբ կապուած են այլ վայրերի հետ եւ կարեւորն այն է, որ այս երգերը լայնօրէն տարածուած են եղել վասպուրականում, Մոկաց աշխարհում, Շատախում, Տարօնում եւ բնութագրում են այդ վայրերի կենցաղը: Այս երգերը կրկին վերադարձուած են ժողովրդին: Մաղթում ենք Նարինէ Շահբազեանին յաջողութիւններ իր հայրենասէր եւ ազգօգուտ ծրագրերին:

Եկէք միասին վայելենք հայ երգի ակունքները:







### Հ.Բ.Ը.Մ.Ի ՆԱԽԱԳԱՐ ՊԵՐՃ ՍԵՂՈՎԱԿԱՆԻ ԽՕՍՔԸ ԳԱՌՆԻԿ ԳԱՐԱՅԵԱՆԻ ՄԱՐՈՒԱՆ ԱՌԹԻ

Սիրելի Տիկին Անժէլ,  
Սգակիր Հարազատներ  
եւ Միութենականներ

Քիչ են այն անհատները որոնք իրենց երկրաւոր կեանքի աւարտին հոգեկան լիացումի հասած, կրնան հաստատել թէ իրենց կեանքը ապրած են ամբողջական արդիւնաւորութեամբ, իրենց անձին հմայքով հարստացուցած ըլլալով նաեւ իրենց շրջապատը:

Գառնիկ Գարայեանը անկասկած այդ պայծառ անձնաւորութիւններէն է:

Իր 91 տարիներու երկար կեանքի բազմադիւն ընթացքը, գոր ապրած է իբր տիպար մարդ, ամբողջական Հայ, ընտանիքին նուիրուած հայր, ազգային գործիչ, միութենական էր ծառայող, ձեռնհաս ղեկավար եւ իր օրինակով սերունդներ դաստիարակած առաջնորդ, իր դրոշմը ձգած է զինք սիրողներու եւ յարգողներու լայնածիր շրջանակի մը վրայ, ամենուր եւ միշտ ապրող լիշատակի մը, աւելի ճիշդը մնայուն ներկայութեան մը վերածելով զինք:

Գառնիկ Գարայեաններ, որոնք կը մարմնաւորեն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան ազգանուէր ոգին, իրենց կեանքով եւ գործունէութեամբ լաւագոյնս դրսեւորած են մեր Մեծ Միութեան գործելակերպը եւ առաջնորդող ներկայութիւնը մեր ազգային կեանքէն ներս, անցեալ հարիւրամեակին, նաեւ մերօրեայ յարափոփոխ բարդ ու արագընթաց իրականութեան մէջ պահպանելով ազգային քաղաքական ու մարդկայնական անշեղ ուղեգիծ եւ հաստատաբայլ յառաջընթացը:

Ղեկավարի բնատուր ուշիմութեամբ եւ առաջնորդի խոհակալութեամբ օժտուած Գառնիկ Գարայեանին համար, ինչպէս Գարայեան մեծ ընտանիքի բոլոր անդամներուն պարագային ընդհանրապէս, Հ.Բ.Ը.Մ.Ի. Միութեան գործադաշտը եղած է իր կեանքի բեղմնաւոր գործունէութեան բնական շրջապատը, ուր ան շատ երիտասարդ տարիքէն ստանձնած է առաջնորդ դերեր, Սուրբոյ մէջ ատենին նորակազմ Հայ Երիտասարդաց Ընկերակցութեան շարքերէն մինչեւ Ներգաղթի Կոմիտէ, Կրթական Յանձնախումբ, Շրջանակային Յանձնաժողով, ապա Լիբանան՝ քաղաքացիական պատերազմի ընթացքին Համակարգիչ Յանձնախումբ եւ ի վերջոյ Միացեալ Նահանգներ, ուր ան իր կարեւոր ներդրումը ունեցած է Միութեան փաստինայի Կեդրոնին իրականացումին եւ յատկապէս իր դատեր եւ փեսային Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններու անունը եւ հովա-



նաւորութիւնը վայելող սփիւռքահայ նորագոյն երկրորդական վարժարանի հիմնումի նախաձեռնութեան մէջ:

Գրեթէ մէկ դարու հարուստ կեանք մը, որուն ընթացքին իր ասպարէզային փայլուն յաջողութիւնները գուգահեռ ընթացած են իր ազգային մարդասիրական ծառայութիւններուն, իրեն համար մտասեւեռում ունենալով երիտասարդութիւնը եւ շարունակաբար բծախնդիր հոգածութիւն ցուցաբերելով նոր սերունդի հայեցի դաստիարակութեան ու առողջ կազմաւորումին ուղղութեամբ:

Այժմ, հրաժեշտի այս պահուն, երբ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան

Կեդրոնական Վարչական Ժողովին անունով, նաեւ իբր ընտանիքի սերտ բարեկամ ու հարազատ, իմ եւ տիկնոջս Վերային կողմէ կը փորձենք ձեզի հետ բաժնել մեր սրտի խօսքը եւ ջերմ զգացումները, մեր բոլորին սիրելի Գառնիկ Գարայեանի հարուստ եւ արդիւնաւոր կեանքը մեզի՝ իր միութենական մեծ ընտանիքի անդամներուն համար միսթարութիւն եւ ներշնչող օրինակ կը հանդիսանայ:

Այս առթիւ մեր խորազգաց ցաւակցութիւնները կը փոխանցենք հանգուցեալի տիկնոջ Անժէլին, գաւակներուն՝ Մարալ Վարդանին, Տէր եւ Տիկին Վաչէ եւ Թամար Մանուկեաններուն, Տէր եւ Տիկին Րաֆֆի եւ Վիքի Գարայեաններուն, նաեւ թոռներուն՝ Թալինին, Յովիկին, Վահէին, Արամին, Սիրանին, Եղիշէին, Գառնիկին, Արամին եւ կրտսերն Գառնիկին:

Կ'աղօթենք որ Աստուած Լուսաւորէ Գառնիկ Գարայեանի արդար հոգին եւ կը մաղթենք որ իր անմեռ ոգին շարունակէ ներշնչել մեր միութենական սերունդները ազգային ծառայութեան բարձր իտէալով:

Անմահ եւ օրհնեալ է ազգի նուիրեալներուն լիշատակը:

### ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ՝ ՑՎԵՏԱՆԱ ՊԱՍԿԱԼԵԻԱՅԻ ՅԵՏ

Շարունակուած էջ 8-էն

մնում էի եւ այնպէս ստացուեց, որ 1991-ից մինչեւ 1994 թուականի յաղթական Մայիսը մնացի Արցախում: Երբ, գինադատարի պայծառնազրից յետոյ, Ղարաբաղը որեւէ իրաւական կարգավիճակ չստացաւ, ես որոշեցի մնալ Հայաստանում, որպէսզի հետեւեմ թէ ինչ է տեղի ունենալու յետագայում, որովհետեւ ես մեծ ջանք էի ներդրել իրականութիւնը ցոյց տալու համար, ես աշխատում էի եւ տանջուում էի այն սպանուած երեխաների, կանանց եւ ծերերի համար, ես միշտ լաց էի լինում, երբ վիրակապում էի վիրաւորներին, տալիս էի իմ արիւնը որովհետեւ հագուազիւտ արեան խումբ ունեւ 4-րդ կարգ բացասական, դարաբաղցիները շատերը իրենց արեան խումբը չգիտէին: Պատերազմի դաշտում ատրպէյճանցիներին էլ էի փրկում, մարտից յետոյ գերի ընկածների հետ էի թողնում հաշուեյարդար տեսնեն, որ կրքերը շատ չբորբոքուեն, մարդասիրութիւն ցուցաբերեն, որովհետեւ դարաբաղցիների համար էլ շատ կարեւոր էր կենդանի գերի ունենալը: Ատրպէյճանցիները շատ ժամանակ մէկ հայ գերու դիմաց 15 ատրպէյճանցի էին պահանջում, այս հարցում մեր զինուորները կատակում էին, որ «Ցվետանա ատրպէյճանցիները քեզ մահուան դատաւճռի փոխարէն պէտք է յուշարձան կ'անգնեցնեն, եթէ իմանան թէ քանի ատրպէյճանցու կեանք ես փրկել»: Ես միակ անգէն մարդն էի մարտի դաշտում, գէնքս իմ կամերան էր, որ միշտ ինձ հետ էր:

- Պատերազմի ժամանակ դուք միշտ թե՛ կտներում էք եղել: Պատմեք Ձեր դժուար եւ ուրախ պահերի մասին: Ի՞նչ ապրումներ էք ունեցել:

- Ողբերգական եւ ցաւալի վիճակներ շատ են եղել, հիմա էլ հազարաւոր անգամներ իմ դիտած կադրերը նայելիս զգում եմ այդ ողբերգութեան հոտը: Առանձնապէս լիշում եմ 11 տարեկան մի աղջկայ, որը որովայնից վիրաւորուած էր եւ 3 անգամ վիրահատուելուց յետոյ արիւնահոսութիւնը դեռ շարունակուած էր եւ նրա փրկութեան համար բժշկները ինձանից արիւն խնդրեցին, ես իհարկէ չմերժեցի: Յաջորդ օրը, առաւօտեան, ինձ ասացին, որ աղջնակը ուզում է ինձ տեսնել, ես գնացի նրա մօտ, նա բացեց խոշոր մեծ աչքերը եւ դժուարութեամբ շնորհակալութիւն յայտնեց, ասելով զիտի որ ես ուժեղ կիւն եմ եւ իմ արիւնը կ'օգնի իրեն ոտքի կանգնելու եւ ինքը երբեք չի մահանայ, նրա կողքին երիտասարդ ծնողներն էին, որոնք նոյնպէս հաւատով եւ յոյսով ինձ էին նայում: Յաջորդ առաւօտեան գնացի փոքրիկ աղջկան տեսնելու բայց նրա անկողինը դատարկ գտայ, բուժքոյրն ասաց, որ մահացել է: Չնայած դժբախտութեանը երիտասարդ ծնողները մի քանի ժամ սպասել էին ինձ շնորհակալութիւն յայտնելու:

Հասկացէք, որ սա Ղարաբաղցու հոգու ուժի դրսեւորումն է, որ նրանց կոտրել անհնարին է:

Իսկ ուրախը՝ որ մարտերի միջեւ ընկած ընդմիջմանը ես օգտուում էի միշտ օժանելիքներից, որ ամիսներով խրամատներում շրջապատ գինուորները լիշեն, որ իրենք մարդ են, երբ որ

ես անցնում էի անշուտահոտութիւն տարածելով զինուորները կատակելով ասում էին, որ ես իրենց արքայադուստրն եմ:

Ես ուզում էի որ իրենց մի պայծառ բան թողնել ու նրանք չընկճուեն:

Իմ անունով 1991թ.-ին Շահումեանում մի աղջկայ մկրտեցին: 1993թ երբ Ղարաբաղի հիւանդանոցում էի ապրում ինձ մօտեցան մի տատիկ եւ մի երիտասարդ կին փոքրիկ աղջկայ հետ ասելով, որ աղջկան անուանել են Ցվետանա:

Ներկայիս այդ աղջիկը՝ Ցվետանա Հայրապետեանը ապրում է Ստեփանակերտում եւ ուսանում համալսարանի քաղաքագիտութեան բաժնում, լաւ իմանալով, որ իր մասնագիտութիւնը յետագայում ինչին է ծառայեցնելու:

- Արդեօ՞ք դիմել էք Ատրպէյճանական կողմի եւ ժողովրդի կարծիքը եւ մօտեցումը իմանալու:

- Պատերազմի սկզբում չորս անգամ անցել եմ Ատրպէյճանական կողմը. փնտռելու հայկական հեռուստատեսութեան լրագրող Վահան Յովհաննիսեանին, որին գտայ Գանձակի բանտում: Շատ եմ խօսել ատրպէյճանցի գերիների եւ վարձկանների հետ, բայց քանի որ Ատրպէյճանում ինձ մահուան էին դատապարտել պարզ էր, որ ես էի կարող անցնել Ատրպէյճան:

- Ատրպէյճանական կողմը փորձում է «խոջալուի» դէպքերը, հայերի դէմ պրոպագանդայի վերածել: Վերջերս Արցախում եւ Յայաստանում իրապարակուած եռալեզու՝ հայերէն, ռուսերէն եւ անգլերէն գրքոյկը ապացուցում է, որ ատրպէյճանական կայքերում ներկայացուած «խոջալուի զոհերի» նկարները մեծաւ մասամբ պատկանում են Թուրքիայի եւ Յարաւսլախիայի բնական աղէտների եւ ազգամիջեան բախումների, որոնց տարիներ ազերիները ներկայացնում էին, որպէս խոջալուի զոհեր. Ի՞նչ գիտեք այս մասին:

- Խոջալուի դէպքերի ժամանակ Ղարաբաղում էի, բայց գիտէի որ Խոջալուն օղակի նման սեղմել էր Ստեփանակերտը եւ մշտապէս չարձակումներ եւ կրակոցներ էր լինում այդ կողմից եւ հարկաւոր էր այդ օղակը բացել: Յետագայում ինչքան տեղեկացել եմ, զոհուածները ատրպէյճանցի զինուորների կողմից գնդակահարուած մարդիկ են եղել: Գիտեմ որ հայերը միջանցք էին թողել խաղաղ բնակչութեանը հեռանալու համար: Բայց ատրպէյճանցիները ամէն ինչ անում էին փաստերը խեղաթիւրելու համար: Նոյն սպանուածը տարբեր վիճակներում նկարուած էր, մի անգամ շորերով, մի անգամ առանց շորերի եւ բազմաթիւ այդպիսի փաստեր:

- Ի՞նչ պատգամ կ'ուղղէք Յայուրեանը:

- Յանկանում եմ միասնութիւն, քանի որ տեսել եմ երբ հայ ժողովուրդը միասնական է ինչի կարող է հասնել: Միասնական էք՝ ուժեղ էք եւ յաղթող: Նորից եմ ասում Ձեր ուժը միասնութեան մէջ է... Սփիւռքը մեծ ներուժ է:

Հարցազրույցը վարեց՝ «Հայաստան» շաբաթաթերթի խմբագիր՝ Այվազեան Դաւիթը Աթէնք

833 W. Glenoaks Blvd. Glendale, CA 91202 (818) 240-0065



**Dr. Missak Ekmekdjian**  
Chiropractor



**Dr. Anahid Ekmekdjian**  
Chiropractor

Մեծահասակներու եւ մանուկներու Թայրոքոթերապիա բուժում:  
Գլխացաւ, վզի, մէջքի, յօդային եւ մկանային ցաւեր:  
Ինքնաշարժի վթարի նետանքով պատճառած վնասուածքներու բուժում:

Ձեր առողջութիւնը մեր մտահոգութիւնն է



### ՎԱՐԴԱՆԱՆՔ

#### Շարունակում է 7-էն

Վրամ Դ.ի մահն էտք, Յագկերտ Ա.ի օրերուն, ժառանգեց իր տոհմական Սիւնեաց աշխարհի իշխանութիւնը՝ քսան տարիքը հագիւթեակոխած:

Վասակ «աստուածային նպաստամտոյց» մը եղաւ, եւ չզլացաւ նիւթաբարոյական անսակարկ օժանդակութիւն տրամադրելու Ս. Մեսրոպ Մաշտոցին, երբ ան Հայոց նորաստեղծ գիրին ու մշակոյթին լոյսը բերաւ Սիւնեաց կողմերը: Պարսկերէնին կից, որուն կը տիրապետէր քաջապէս, հմտացաւ նաեւ մայրենիին, ու դպրութեան ճամբով ծանօթացաւ Աստուածաշունչի բովանդակութեան, նաեւ՝ քրիստոնէական վարդապետութեան էութեան. բայց ասոնց կողքին իր մէջ միշտ տիրապետող մնացին իր քաղաքագիտական նախասիրութիւններն ու դիւանագիտական բնածին ընդունակութիւնները: Վասակ տրամաբանութեան մարդն էր, որուն համար եւ, ի պահանջել հարկին, ան կրնար զոհել զգացականը, առաջնահերթութիւն տալով մտքին թելադրութեան եւ ոչ թէ սրտի ապրումին:

#### ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԵԾԱԳՈՅՆ ՀԱԿԱՍՈՒԹԻՒՆԸ

Ազգը, որ Եկեղեցիին ճամբով սրբացուցած եւ գերագանց հերոսի մը վերածած է Վարդանի կերպարը, վերջինիս հակադրելով Վասակ Սիւնիին անունը՝ «ագգային դաւաճանի» անէծքով խարանած է զայն:

Ինչո՞ւ Արժէ՞ արդեօք վերարծարծել նիւթ մը, որուն մասին պատմութիւնը տուած է իր վճիռը: Նախ՝ պատմութիւնը կերտողը որոշապէս մարդն է, եւ ոչ թէ ինքնատիւքեան՝ ժամանակը: Մարդն է որ ժամանակը պատմութեան կը վերածէ՝ չիշելու եւ աւանդելու իր արտակարգ կարողութեամբ: Ապա, ամէն տարի երբ Վարդանանց տօնը կը նշենք, քաջն Վարդան Մամիկոնեանի լուսապսակ կերպարին հետ մեր մտապատկերին վրայ միաժամանակ կ'ուրուագծուի ստուերոտ դէմքը Վասակ Սիւնիին՝ դաւաճան Բրուտոսներու եւ իսկարիովտացի Յուդաներու շարքին դատապարտուած պատմութեան անարգանքի սիւնին:

Այստեղ հարց կ'առաջանայ. արդեօք խեղաթիւրուած է՞ մեր դատողութիւնը՝ նախապէս մեզի աւանդուած տեղեկութիւններով եւ ի տղայի տիոց դասաւանդուած քրիստոնէականով: Առեղծուածը անլուծելի կը մնայ այնքան ժամանակ որ հրամցուածը կուր կը տրուի առանց հարցադրումներ կատարելու. իսկ ազատախոհութիւն եւ քննադատական ոգի ցուցաբերել՝ պարտադիր հրամայականն է բարոյական գիտակցութեան, ազնիւ խղճին ու անկապտելի իրաւունքը՝ տրամաբանող անհատին:

Երկու հիմնական աղբիւրներ՝ Եղիշէ Պատմիչ եւ Ղազար Փարպեցի(2) մեզի կ'աւանդեն Վարդանանց Պատերազմին պատմութիւնը: Երկուքն ալ Եկեղեցիի հոգեւոր սպասաւորներ, որոնք բնականաբար ստորոտուած են քրիստոնէական ջերմեռանդութեամբ, հաւատքով ու պաշտօնաբար խօսուածութեամբ: Ինչքան ալ հիացում ունենանք ոսկեգրիչն Եղիշէի եւ Ղազար Փարպեցիի ժամանակագրական ու մատենագրա-

կան վաստակին նկատմամբ, միեւնոյնն է, հարց պէտք է տանք, թէ իսկապէս անկողմնակա՞լ ու ճշմարիտ է անոնց ներկայացուցած Վասակ Սիւնիի կերպարը(3): Արդեօ՞ք արդար է անոնց տուած գնահատականը: Չմոռնանք, որ թէ՛ ջատագովական, եւ թէ՛ հակաճառական քրիստոնէական գրականութիւնը, այսօրուայ լեզուով՝ լրատուական պատերազմը կամ քարոզչութիւնը, որոշակի իմաստով, կրնայ խեղաթիւրել ցանկացած իրականութիւն: Ան ի վիճակի է սուրբի գլխուն վրայ դնել աստանայի պոզերը, իսկ աստանային՝ սուրբին լուսապսակը, եւ զայն ներկայացնել պատմութեան: Ընդամենը կրկէսի հայելին ստեղծել էր պէտք, անոր երեւոյթին մէջ այլանդակելու համար ցանկացած իրականութիւն: Արդարեւ, Եկեղեցին ալ ունի այդ հայելին, եւ զայն կը գործածած է, երբ անոր պէտք ունի:

Վարդանանք սուրբ հռչակուած են Եկեղեցիին կողմէ. արժանի եւ իրա՛ւ:

Այստեղ թող արտօնուած ըլլայ մեզի կատարելու նիւթէն փոքր տարաշեղուածը, պարզապէս դասական օրինակ մը յուշելու դիտումով: Ֆրանսայի ազատագրական պայքարի անմահանուն հերոսուհին՝ Օրլէանի Կոյսը՝ ժամ տ'Արք, Կաթողիկէ Եկեղեցւոյ հաւատաքննութեան կողմէ իբրեւ հերետիկոս դատապարտուել է իտալի մահով պատժուելէ 500 տարի ետք միայն, վերատեսութեան ենթարկուելով վերագնահատուեցաւ եւ ընդգրկուեցաւ Եկեղեցւոյ միութեան կողմէ: 1909ին Պիոս Ժ. գինք երանելի, իսկ 1920ին Պենետիքտոս ԺԵ. սուրբ հռչակեցին:

Ինչ փոյթ, թէ՛ 1600 տարիներու պատմութիւն մը ամրագրուած է արդէն, է՞՞ եկած արդեօք ժամանակը, որ մարդասիրական նոյն մօտեցումը ցուցաբերուի Հայոց մարզպան՝ Վասակ Սիւնեցիի հանդէպ, վար առնելով զինք անարգանքի սիւնէն, որուն վրայ ան որպէս «դաւաճան հայրենեաց» շղթայուած է անյիշաչար ժամանակներէ ի վեր: Չէ՞ որ ներողամտութիւնը քրիստոնէական առաքինութիւն է, իսկ քինախնդրութիւնը՝ մեղք: Թերեւս մեր կեանքին մէջ չկայ աւելի հզօր ուժ մը, գերագանց առաքինութիւն մը, քան՝ ճշմարտութիւնն ու արդարութիւնը: Աստուածային էութեան բարոյական ըմբռնումն անգամ արդարութեան գաղափարին մէջ կը գտնէ իր գերագանց տարողութիւնն ու նշանակութիւնը:

Վարդան եւ Վասակ՝ երկուքին ալ շարժառիթը նոյնն է՝ փրկել ազգը վերահաս վտանգէն, ու պահպանել պետական կառուցէ գուրկ հայրենիքին ներքին անկախութիւնը: Վարդան՝ զգացումին մարդն էր, համակ նուիրական սիրտ մը, ուր քրիստոնէական մաքուր հաւատքն ունէր իր լոյսը: Դժուար է ըսել, թէ Վասակ պակաս քրիստոնեայ մըն էր քան Վարդան, բայց իր մօտ գերակշռող էր իրատեսութիւնն ու քաղաքական տրամաբանութիւնը: Տարակոյս չկայ, որ նոյն հայրենասիրութիւնը զինք կը մղէր մտքի իմաստութեան հնարքներուն: Վարդանի անձին մէջ բազմուցութիւնն էր որ կը խօսէր ու զինք կը մղէր գիտակից նահատակութեան: Վասակի գործունէութեան մէջ քաղաքագիտական-դիւանագիտական ոգին էր որ զգացումին

կամայական պոթկումները կը սանձէր ու զինք կ'առաջնորդէր պատասխանատու զգուշաւորութեան: Եղիշէ, այս երկու մօտեցումները՝ հաւատքինն ու մտքինը, Վարդանանց Պատերազմի զարգացման ամբողջ ընթացքին հետզհետէ անհաշտելի դարձան իրարու, եւ այսպէս՝ ազգին այս երկու մեծ առաջնորդները դժբախտաբար հեռու մնացին իրարմէ: Աւարայրի ճակատամարտին մէջ տեղի ունեցաւ վերջնական աղիտալի բաժանումը. մին՝ պսակուելով արեան նահատակութեամբ, միւսը՝ ենթարկուելով անհասկացողութեան, որդեգրած ռազմավարութիւնը դարձաւ բազմութեան անընդունելի եւ պատմութեան մութին մէջ մնաց զրեթէ անթափանցելի:

#### ԱՒԱՐԱՅՐԸ՝ ՊԱՐՏՈՒԹԻՒՆ, ԲԱՅՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՊԱՏԵՐԱԶՄԸ՝ ՅԱՂԹԱՆԱԿ

Աւարայրի ճակատամարտը կը կանխորոշէ հայ ժողովուրդի ազատագրական պայքարին ելքը: Պարսկական արքունիքը, համոզուելով որ հայերը կարելի է կրօնափոխ ընել, ստիպուած կ'ըլլայ որդեգրելու մեղմ քաղաքականութիւն մը՝ աւելի փորձելով սիրաշահիլ գահնոք:

Յագկերտ Բ. հարկադրուած Հայաստանէն ետ կը կանչէ իր զօրքը, կը ճանչնայ Հայաստանի ներքին ինքնավարութիւնը, կը հրաժարի բռնի կրօնափոխութեան ծրագրէն, կը թեթեւցնէ հարկերը եւ կը վարէ հայերը սիրաշահելու քաղաքականութիւն: Բայց հայ ժողովուրդի ազատագրական պայքարի ուժը չի գոհանար պարսկական արքունիքի կողմէ մատուցուած վերոյիշեալ շարժումներով, եւ ազգային պայքարը կը շարունակէ նաեւ յետագայ տասնամեակներու ընթացքին:

481-484 թթ. Հայոց սպարապետ Վահան Մամիկոնեանի զլխաւորած Վահանեաց պատերազմը կը հասնի կատարեալ յաջողութեան ու կը պսակուի ռազմական ու քաղաքական յաղթանակի մը անանց փառքով: Իբրեւ հետեւանք, 484 թուականին կնքուած հայ-պարսկական Նուարսակի դաշնագրով, Հայաստանի մէջ կը վերանան Քրիստոնէութեան դէմ կազմակերպուած հալածանքները, Հայ Եկեղեցիին կը շնորհուի ազատ գործելու իրաւունք, իսկ երկրին՝ վարչական որոշակի ինքնավարութիւնը:

16 երկար դարեր անցած են, բայց Վարդանանք դարձած են օտար բռնակալութեան դէմ հայ ժողովուրդի ազատագրական պայքարի, ազգային ինքնուրոյնութեան պահպանման եւ անկուր կամքի դրսեւորման խորհրդանիշ: Վարդանանք Հայոց պատմութեան առաջին նահատակներն էին, որոնք գիտակցած են հայրենիքի կարմիր գոհասեղանին նուիրաբերելու իրենց կեանքը: 451 թուականէն մինչեւ այսօր հայոց պատմութիւնը իր

հիմնական խորքով ու էութեամբ իր վրայ կը կրէ Վարդանանց հերոսներու եւ պայքարի ազդեցութիւնը:

Պատանեկութեանս շրջանին, երբ Պէյրութի մէջ մեր թաղի ազգային Տատրեան մանկապարտէզն ու ապա Սահակ-Մեսրոպեան վարժարանը կը յաճախէի, ըլլա՛յ դպրոցին բակը՝ զբօսանքներու ատեն, ըլլա՛յ փողոցը՝ խաղալու ժամանակ, խաղընկերներուս հետ խմբովին բուռնցքնիս դէպի վեր բարձրացնելով եւ ոտքերնիս գետին զարնելով կը տողանցէիք, դրացի արաբ տղոց յանկերգի մը պէս արտասանելով սա քառեակը.

«Հա՛յ եմ ես, հայ ես, Սարսափեցէ՛ք իմ ձեռքէս, Հայաստանը ազատող, Քա՛ջ Վարդանի թոռն եմ ես»:

Թերեւս միամիտ, բայց նաեւ տղայական այս քառեակին մէջ խտացած է հայ ժողովուրդի ազատագրական պայքարի անկողորմ ոգին, անոր ազատասիրութեան մարմնացումը, որ կը յարատեւէ անցնող դարերէն ի վեր, եւ իբրեւ չժանգոտող ամուր պողպատ մը՝ կը դիմանայ ժամանակի մաշումին դէմ:

Ես պիտի ուզէի, որ մեր տղաք ալ ներշնչուած ըլլան այս ոգիով, հայ մշակոյթին եւ ինքնութեան պայծառ գիտակցութեամբ, հայ ցեղին պատկանելու հպարտութեամբ, բանիւ եւ գործով իրենց կեանքին կարեւոր կարգախօսներէն մին դարձնելով Վարդանանց գաղափարախօսութիւնը: Սոյնը սակայն պէտք էր ըլլայ համապարփակ եւ հաշտարար՝ Վարդանի մը սիրտը եւ Վասակի մը միտքը, պատաստակամութիւնն ու իմաստութիւնը պէտք է միաձուլուած ըլլան իրարու, կերտելու համար աւելի կուռ եւ անպարտելի ուժ մը, որու հիմքին վրայ ամուր պիտի կանգնի թորգոմայ օրհներկալ տունը:

Հայ ժողովուրդը, որ տարուէ տարի կը տօնախմբէ Վարդանանց հոգեւոր-բարոյական յաղթանակին փառապանծ տօնը, պէտք ունի վերանորոգուելու հայրենիքի ու հաւատքի սրբազան խորանին զոհուած անմահներու հոգիով, մեր հայրերու անմահութեան խորհուրդին մէջ տեսնելու եւ երախտաւորելու համար մեր ներկայի ու ապագայի բոլոր գեղեցիկ երազներուն իրականացումը:

\*\*\*\*\*  
1 Տե՛ս, Եղիշէ, Վասն Վարդանայ եւ Հայոց Պատերազմին, Երեւան, 1989, էջ 56-82:

2 Ղազար Փարպեցի, Պատմութիւն Հայոց, Թուրք Առ Վահան Մամիկոնեան, Երեւան, 1982:

3 Քննարկուած միւսիս ատու յուրեմս յանձնարարելի է կարդալ Գեորգ Յովհաննիսեանի շահեկան յօդուածը «Դաւաճան, Թէ՞ ոչ ոք» խորագրով, որ վերջերս լոյս տեսած է Հայաստանի Հանրապետութիւն թերթին եւ ընդհանրապէս հայ մամուլին մէջ:

massispost.com  
daily news updates



www.massisweekly.com  
updated every Friday



### ՆԱԽԱԳԱՐԻ ԶԱՆՈՂՈՒՄԸ

Ծառուկա կուած էջ 6-էն

Ասատրեանի մօտ երկու հիմքերն էլ բացակայել են, սակայն արդարադատութեան նախարարութեան տեղաբաշխիչ յանձնաժողովը նման որոշում է կայացրել:

Երբ դատարանում բողոքարկեցինք նշուած որոշումը, հիմքում դնելով այն, որ նման որոշման հիմքը, առիթը բացակայել է, դատարանները մեր պահանջը մերժում էին, պատճառաբանելով, որ որոշումը կայացուել է բաց քուէ-րակութեամբ եւ չի կարող վերացուել:

Բնականաբար, այս գործով կատարուած ապօրինութեան «արդարացումը» եւ ս նախագահականն է:

Սիլվա Ասատրեանի նկատմամբ կատարուող ապօրինութիւնների շարանը դեռ շարունակուած է:

Հիմա էլ նրա նկատմամբ համաներումը չեն կիրառուած, աւելի ճիշտ կիրառուած են մասամբ:

Սիլվա Ասատրեանին մեղադրուած արարքներից մէկի համար պատիժ է սահմանուել 8 տարի, միւսի համար 2 տարի ազատազրկում եւ գումարելով իրար, վերջնական պատիժ է սահմանուել 9 տարի:

Համաներման ակտով Սիլվա Ասատրեանը պէտք է ազատուել այն արարքի համար պատի կրուածից, որի համար 2 տարուայ ազատազրկում է սահմանուել, իսկ 8 տարուայ էլ պէտք է կրճատուել պատի չկրած մասի Զ-ը:

Ի՞նչ պէտք է անէին մեր համաներում կիրառողները, պէտք է ութ տարուայ պատժամակէտը գերազանցող մասը, այսինքն 1 տարուայ պատժից Սիլվա Ասատրեանին ազատէին, իսկ մնացած ժամկէտն էլ կրճատէին Զ-ով: Բայց արի ու տես, որ այդպէս շարուեց եւ խտրականօրէն Սիլվա Ասատրեանի նկատմամբ կիրառուեց միայն ծանր յանցագործութեան համար նախատեսուած՝ պատի չկրած մասը Զ-ը ով կրճատուելու մասը: Այսինքն Սիլվա Ասատրեանը ըստ համաներման ակտի պէտք է ազատուել թեթեւ արարքի պատժից, բայց դա չարուեց եւ դրա համար սահմանուած ազատազրկման ժամկէտն էլ ընդամէնը Զ-ով կրճատուեց:

Այս գործով էլ ենք դիմել դատարան, սակայն առաջին ատեանի դատարանը պահանջը մերժեց այնպիսի պատճառաբանութեամբ, որը իրաւունքի հետ աղերս անգամ չունի եւ բնականաբար բողոքարկուել է վերաքննիչ դատարան:

Այս դէպքում էլ ապօրինութեան սլաքները դէպի գլխաւոր դատախազութիւնն են ցոյց տալիս:

Ի դէպ, եթէ համաներումը Սիլվա Ասատրեանի նկատմամբ ճիշտ կիրառուել, ապա նա 11.02.2012թ-ին պէտք է ազատ արձակուել պատժի կրումից:

Սիլվա Ասատրեանին 11.02.2012թ-ին ազատ շարձակելու եւ նրան ապօրինի անազատութեան մէջ պահելու դէպքում կրկին ստիպուած ենք լինելու դիմել Մարդու իրաւունքների եւրոպական դատարան:

Նունէ Ասատրեանը ԱՄՆ քաղաքացի է, երբեք էլ Հայաստանի Հանրապետութիւնում չի բնակուել եւ ՀՀ քաղաքացի չի եղել:

Նա ունի երեք երեխայ, որոնք

եւս ԱՄՆ քաղաքացիներ են: Նրա ամուսինը եւս ԱՄՆ քաղաքացի է, սակայն ՀՀ-ում բանկ ունէր եւ մեծահարուստ է:

Նրանց ընտանիքը վերջին տարիներին բնակուել է Բելգիայում: Նունէ Ասատրեանը Բելգիայի դատարանում ամուսնալուծութեան գործընթաց է սկսում, որից յետոյ նրա ամուսինն է ՀՀ դատարանում Նունէ Ասատրեանից ամուսնալուծուելու գործընթաց սկսում:

Թէեւ մեր օրէնքով ՀՀ դատարանը չի կարող քննել երկու օտարերկրեայ քաղաքացիների ամուսնալուծութեան վէճը, սակայն ՀՀ դատարանը գործը վարոյթ է ընդունում, մէկ ժամ չտեսած մէկ դատական նիստով գործի քննութիւնն աւարտում ու ամուսնալուծում, այն դէպքում, երբ Նունէ Ասատրեանի փաստաբանը դատարանին միջնորդում է մի քանի օրով յետաձգել դատական նիստը, որպէսզի Բելգիայում բնակուող Նունէ Ասատրեանը ներկայանայ դատական նիստին:

Փաստաբանը նաեւ ներկայացնում է Նունէ Ասատրեանի ԱՄՆ անձնագրի պատճէնը, ապացուցելու համար, որ նա ԱՄՆ քաղաքացի է եւ ՀՀ դատարանը չի կարող գործը քննել:

Դատարանը, սակայն, դատական նիստը չի յետաձգում, ամուսնալուծութեան վճիռ է կայացնում, ապացուցների ցանկից հանելով Նունէ Ասատրեանի անձնագրի պատճէնը, նշելով, որ ապացուց կարող է լինել բնօրինակը, իսկ վճռի հիմքում դնում է ՀՀ ոստիկանութեան անձնագրերի եւ վիզաների վարչութեան գրութիւնն այն մասին, որ Նունէ Աբովեանը (օրիորդական ազգանուն) ՀՀ քաղաքացի է, 1996թ-ին ստացել է ՀՀ անձնագիր:

Նունէ Ասատրեանը, որ 1996թ-ին ՀՀ չի եկել ԵՒ ՀՀ անձնագիր չի ստացել, տեսնելով, որ կատարուել է կեղծիք, այսինքն ՀՀ դատարանում ամուսնալուծութեան հարցը քննելու համար հետին ամսաթուով կեղծ հիմք է ստեղծուել, իբր թէ նա 1996թ-ին ՀՀ անձնագիր է ստացել, դիմել է քրէական գործ յարուցելու համար: Մինչեւ գործի յարուցումը կատարուել է փորձաքննութիւն եւ փորձագէտի եզրակացութեան համաձայն անձնագիր ստանալու եւ տրամադրելու թիւ 1 ձեւի դիմումի ստորագրութիւնները Նունէ Ասատրեանի կողմից չեն արուած, աւելին, երբ անձնագիր է տրուած, թիւ 1 ձեւում ստորագրում է անձնագրային բաժնի պետը, որի ստորագրութիւնը եւս բացակայում է քարտում, ինչը նշանակում է, որ նման անձնագիր ընդհանրապէս չի տրուել, պարզապէս կեղծ հիմք է ստեղծուել ամուսնալուծութիւնը ՀՀ դատարանի կողմից իրականացնելու համար անձնագրերի եւ վիզաների վարչութիւնից Նունէ Ասատրեանի քաղաքացիութեան մասին տեղեկանք ստանալու համար: Նման պայմաններում, սակայն, քննիչը քրէական գործ չի յարուցում, նրա գործողութիւնները բողոքարկում են դատախազին, այնուհետեւ դատարան, սակայն, անարդիւն է:

Այստեղ էլ ՀՀ ոստիկանութեան անձնագրերի եւ վիզաների վարչութիւնում կատարուած կեղծիքը կոծկելու խնդիր կար, համ էլ Նունէ Ասատրեանի ամուսինը հարուստ է:

Մարտին Մայսուրեանը երկար տարիներ եղել է Գորիսի

### ԴՈՒՔ ՊԵՏՔ Է ԳՏՆԷՔ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ծառուկա կուած էջ 6-էն

տասը տարում, բայց յիշում եմ, որ այն ժամանակ գոյութիւն ունէր ԳԴՀ-ի, ԱՄՆ-ի նման պետութիւնների կողմից հսկայական քաղաքական հետաքրքրութիւն եւ մենք չհասցրեցինք «ժողովրդավարացնել» այս երկիրն այնպէս, ինչպէս պատկերացնում էինք եւ հնարաւոր էինք համարում 80-ականների սկզբներին: Միգուցէ մեր կողմից քաղաքական սխալ էր, որ այն ժամանակ մենք չարագացրեցինք գործընթացները, որոնք վերաբերում էին պայմանագրերի կնքմանը, որոնք Ուկրաինային եւրոպական կառույցներին աւելի մօտ լինելու հնարաւորութիւն կը տային:

Ինչ վերաբերում է ձեր պետութեանը, ապա Հայաստանը բազմիցս արտայայտել է եւ արտայայտում է հետաքրքրութիւն՝ Եւրոպայի հետ հնարաւորինս յարաբերութիւնները խորացնելու հարցում: Իսկ խորացնել առաջին հեր-

շրջգործկոմի երկրորդ քարտուղարը, այժմ էլ ՀԿԿ Գորիսի շրջկոմի առաջին քարտուղարն է:

Նա աւելի քան յիսուն տարի տիրապետում է իր բնակարանի դիմաց գտնուող մօտ 900քմ հողամասը, որը բետոնեայ հիմքի վրայ ցանկապատուած է ու բազմաթիւ ծառեր են տնկուած:

Այդ հողամասը, սակայն, Գորիսի քաղաքապետարանի կողմից աճուրդով վաճառուած է Սիւնիքի մարզպետի կողմ եղբօրը:

Մարտին Մայսուրեանը վիճարկում է աճուրդը եւ բազմաթիւ խախտումների կողքին նշում է նաեւ թուլաբանական այն խախտումը, որը վերաբերում է աճուրդի անցկացման ժամկէտին: Հողային օրէնսգրքի համաձայն «աճուրդի անցկացումից մէկ ամիս առաջ մամուլով եւ զանգուածային լրատուութեան այլ միջոցներով հրապարակում է...», «Իրաւական ակտերի մասին» ՀՀ օրէնքի համաձայն:

«Ամիսներով հաշուարկուող ժամկէտը լրանում է ժամկէտի վերջին ամսուայ համապատասխան ամսաթուին»:

Աճուրդի մասին հրապարակումը տեղի էր ունեցել Մարտի 12-ին, ինչը նշանակում է, որ աճուրդը կարող էր տեղի ունենալ Ապրիլի 12-ից ոչ շուտ, այն դէպքում, երբ վիճարկուող աճուրդը տեղի է ունեցել Ապրիլի 11-ին, այսինքն մէկ ամիսը չլրացած:

Այդպիսի խախտումը օրէնքի համաձայն աճուրդն անվաւեր ճանաչելու հիմք է:

Ինչ արեց վերաքննիչ դատարանը: Բռնեց ու պատճառաբանեց, որ մէկ ամիսը 30 օրն է եւ քանի որ Մարտ ամիսը 31 օրից է բաղկացած, ապա Ապրիլի 11-ին լրացած է եղել 30 օրը, այսինքն 1 ամիսը: Եւ սա այն դէպքում, երբ վերաքննիչ դատարանի նման յաշտնագործութիւն կատարած նոյն դատաւորները ամէն օր վերաքննիչ բողոքները վարոյթ ընդունելիս անդրադարձում են բողոք բերելու

թիւն նշանակում է բարեփոխել ոչ միայն երկրի քաղաքական, այլեւ տնտեսական համակարգը: Պէտք է նշեմ, որ մրցակցութիւնն այստեղ շատ կարեւոր դերակատարութիւն ունի, ինչպէս նաեւ մանր ու միջին բիզնեսին զարգանալու հնարաւորութիւն տալը, քանի որ եթէ չլինի մանր ու միջին բիզնես, ապա չեն լինի նաեւ բաւարար աշխատատեղեր: Եւ մենք նաեւ հետաքրքրուած ենք ձեր երկրի նաեւ տնտեսական յաջողութիւններում: Բայց կրկնում եմ՝ սա ձեր հասարակութեան խնդիրն է ու մարտահրաւէրը եւ այն, ինչ կատարուած է, առաջին հերթին պէտք է համապատասխանի ձեր հասարակութեան պահանջներին: Եւ ես շատ վտանգաւոր եմ համարում այն, որը ԱՄՆ-ը կամ այլ երկիր ունի ինչ-որ շինծու հետաքրքրութիւններ. կարծում եմ՝ դո՛ւք պէտք է գտնէք այն քաղաքական ուղին, որը համապատասխանում է ձեր հետաքրքրութիւններին եւ այսքանով՝ վերջակէտ:

Համար մէկամսեայ ժամկէտը պաշտպանուած լինելու հարցին ու մէկամիսեայ ժամկէտը մեկնաբանում են այնպէս, ինչպէս օրէնքում է գրուած՝ յաջորդ ամսուայ համապատասխան ամսաթիւը հիմք ընդունելով եւ ոչ է 30 օրը:

Բնականաբար այդ դատավորները գիտէին թէ ինչի են գնում, բայց նրանք օրէնքի այդ կոպիտ խախտումն անելիս իրենց ապահով են զգացել, չէ որ Սիւնիքի մարզպետն է գործին խառնուած (տես նաեւ՝ <http://168.am/am/articles/30867>):

Նշուած հինգ գործերը ընդամէնը մի քանիսն են, այն բազմաթիւներից, որոնցով թոյլ տրուած խախտումները դատական պատահական սխալներ չեն, այլ ապօրինութիւն կատարելու հրահանգի արդիւնք են եւ բացի այս վերջինից, մնացած գործերը կապուած են նախագահական նստավայրի հետ:

Իսկ նախագահական նստավայր ասելիս մենք հասկանում ենք Հայաստանի Հանրապետութեան Նախագահին: Եթէ դա այդպէս է, ապա դատական համակարգի նկատմամբ վստահութեան բարձրացման մասին յայտարարութիւնները չար կատակ են յիշեցնում, չէ որ ես հաւատացել էի համապատասխան կամքի առկայութեանը: Եթէ նախագահականը կապ չունի, չի հանդիսանում ապօրինութիւնների պատուիրատուն, ուրեմն թուարկածս կոնկրետ գործեր են, կոնկրետ գործող անձանցով, խախտումներն էլ ակնառու են: Դէ գործեք, ցանկանում եմ տեսնել դատական ապօրինութիւնների նկատմամբ անհանդուրժողականութիւնը, ուզում եմ բարձրանայ հաւատս մեր դատական համակարգի հանդէպ:

Հակառակ դէպքում յաջորդ 4 տարին լրանալուց յետոյ էլ, կ'արձանագրուել, որ դատական համակարգի նկատմամբ հասարակութեան անվստահութիւնը կազմում է 70-80 տոկոս:

**Ձեր Ծանուցումները Վստահեցէք**  
**«Մասիս» Շաբաթաթերթին**  
T: (626) 797-7680 F: (626) 797-6863 massis2@earthlink.net



### ՄԱՐՏԻ



#### ԱՒԱԳ ՍԱՐԿԱՒԱԳ ԱՐՇԱԿ ԵՂԲ. ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆ

Ծնեալ Յունուար 1, 1920 Կիլիկիա, ձիհան  
 Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր սիրեցեալ հօր, մեծ հօր, եղբոր, հօրեղբոր եւ մօրեղբոր մահը՝ որ պատահեցաւ Երկուշաբթի 20 Փետրուար առաւօտեան ժամը 8:00-ին: Յուղարկաւորութեան եկեղեցական կարգը տեղի պիտի ունենայ Հինգշաբթի Մարտ 1, 2012 կէսօրէ առաջ ժամը 10:00-ին, Պրայմօքս Սուրբ Ղեւոնդեանց տաճարին մէջ, 3325 N. Glenoaks Blvd, Burbank, CA 91504, որմէ ետք հանգուցեալին մարմինը պիտի ամփոփուի Hollywood Hills -ի Forest Lawn գերեզմանատան մէջ:

Սգակիրներ՝  
 Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Գրիգոր եւ Սեդա Գալէնտէրեան եւ զաւակուք Տօքթ. Արշակ, Հռիփսիմէ, Սարգիս եւ Պարոյր (Լիբանան)  
 Զաւակը՝ Տէր եւ Տիկ. Գէորգ եւ Սեւան Գալէնտէրեան եւ զաւակուք Թայլին եւ Շահան  
 Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Ժօզէֆ եւ Նուէր Սէբիլեան (Քուէթ)  
 Դուստրը՝ Տէր եւ Տիկ. Տօքթ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեան Թոռները՝  
 Տէր եւ Տիկ. Սարօ եւ Հուրի Սէբիլեան  
 Տօքթ. Վիքէն Սէբիլեան  
 Տէր եւ Տիկ. Արա եւ Միշլին Սէբիլեան (Քուէթ)  
 Տէր եւ Տիկ. Քարլ եւ Մարիա Սալիպա (Քուէթ)  
 Տէր եւ Տիկ. Տօքթ. Յուլիա եւ Մօնիքա Գազանճեան  
 Տէր եւ Տիկ. Նարեկ եւ Նարինէ Գազանճեան  
 Եղբայրը՝  
 Տէր եւ Տիկ. Պաղտասար եւ Լիտիա Գալէնտէրեան եւ զաւակուք Դանիէլ, Սամուէլ եւ Հուրի (Աւստրալիա)  
 եւ համայն Գալէնտէրեան, Նասանեան, Պալեան, Թէլեան, Պազարեան, Գրգեաշարեան, Սէբիլեան, Գազանճեան, Գալֆայեան եւ Աւագեան ընտանիքներ:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ԱՐՇԱԿ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Ս.Դ.Հ.Կ. Արեւմտեան Ամերիկայի վարիչ Մարմինը իր խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն, մասնաւորաբար Տօքթ. Արշակ եւ Վարդուհի Գազանճեանին:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ԱՐՍԷՆ ԳԱԼԱՅԻՆԻ վաղահաս մահուան տխուր առիթով «Մասիս» խորագգաց վշտակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աչրիին, զաւակներուն, յատկապէս մօր Անժէլ Գալայճեանին եւ ընտանեկան համայն պարագաներուն:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ԱՐՇԱԿ ԳԱԼԷՆՏԵՐԵԱՆԻ մահուան տխուր առիթով Անդրանիկ եւ Ալբերտ Գրգաշարեան եղբայրները իրենց խորագգաց ցաւակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի զաւակներուն եւ համայն ընտանեկան պարագաներուն:  
 Առ այդ \$50 տոլար կը նուիրեն «Մասիս»ին:

### ՆՈՐ ԶԱՐԳԱՅՈՒՄ ՂԱՐԱԲԱԴԻ ԶԱՐՅՈՒՄ

Շարունակուած էջ 2-էն  
 Խուճըն իր համար արդէն բաւական ցածր դաս է համարում անմիջականօրէն Ղարաբաղի խնդրի կարգաւորմամբ զբաղուելը եւ կարգաւորման պրակտիկ քաղաքականութիւնը շարունակելու առաքելութիւնը դնում է Եւրամիութեան վրայ, առաւել էս, որ այդ կառույցը կարծես թէ առայժմ այդքան էլ ծանրացած չէ պետական շահի բեռով՝ որը

ցանկացած դէպքում բաւական կարծր բեռ է եւ սահմանափակում է սուբիեկտի ճկունութիւնը, առաւել էս սկզբունքային աշխարհաքաղաքական հարցերում:  
 Պարզապէս խնդիրն այն է, թէ արդեօք Եւրամիութեան երեւակայութիւնը կը բաւականացնի Ղարաբաղի հակամարտութեան հանգուցալուծման նոր մոդելի մշակման եւ պրակտիկ մատուցման հարցում: Խնդիրը բաւական բարդ է, որովհետեւ այն պահան-

### ՄԱՐՏԻ

#### ԺՈՐԺԷԹ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆ (Ծնեալ՝ Քէշիշեան)

Սրտի դառն կակիծով կը գուժենք մեր մօր, մեծ մօր, քրոջ եւ հարազատին՝ ԺՈՐԺԷԹ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ մահը, որ պատահեցաւ Ուրբաթ, 24 Փետրուար 2012-ին:

Յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Շաբաթ, 25 Փետրուար 2012-ին, կէսօրէ ետք ժամը 3:00-ին, Ռեմէյլ Թաղի (Խալիլ Պատաուի) Ս. Յարութիւն Եկեղեցոյ մէջ, ուրկէ հանգուցեալին մարմինը փոխադրուեցաւ Պուրճ Համուտի Ազգային Գերեզմանատունը:  
 Սգակիրներ՝  
 Տէր եւ Տիկին Կիրակոս Թիւթիւնճեան եւ զաւակուք  
 Տէր եւ Տիկին Արա Մկրտիչեան եւ զաւակուք  
 Տիկին Մարիթան Մուղայեան եւ զաւակուք  
 Տէր եւ Տիկին Փօլ Մուղայեան եւ զաւակը  
 Տէր եւ Տիկին Վարդան Քէշիշեան եւ զաւակուք  
 Տէր եւ Տիկին Սարգիս Քէշիշեան եւ զաւակուք  
 Տէր եւ Տիկին Ռաֆֆի Ալեքսանեան եւ զաւակուք  
 Տէր եւ Տիկին Ավրահամ Տէր Նիկողոսեան եւ զաւակուք  
 Տիկին Խաթուն Մկրտիչեան եւ զաւակուք  
 եւ համայն Թիւթիւնճեան, Մկրտիչեան, Մուղայեան, Քէշիշեան, Ալեքսանեան, Տէր Նիկողոսեան եւ Ժըրժի ընտանիքներ եւ ազգականներ:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ԺՈՐԺԷԹ ԹԻԻԹԻԻՆՃԵԱՆԻ մահուան առիթով (մահացած Պէյրութ) Տէր եւ Տիկ. Ժիրայր եւ Քնար Թիւթիւնճեան իրենց վշտակցութիւնները կը յայտնեն հանգուցեալի մերձաւորներուն եւ համայն պարագաներուն:  
 Առ այդ հանգուցեալի յիշատակին \$100 տոլար կը նուիրեն «Մասիս»ի ֆոնտին:

### ՅԱԲԱԿՅԱԿԱՆ

ՅԱԿՈՒ ՍԻՆԱՆԵԱՆԻ անժամանակ մահուան առիթով Նոր Սերունդ Մշակութային Միութեան վարչութիւնը իր ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի աչրիին եւ համայն պարագաներուն:

### ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ԶԱՅ ՔՈՅՐԵՐՈՒ ՎԱՐԺԱՐԱՆ

Շարունակուած էջ 14-էն  
 Նելով Հայաստանի ներքին վիճակը, երբ պարսիկներու Յակոբ Բ. թագաւորը նամակ մը ուղարկած էր Հայոց վարդան Մամիկոնեան սպարապետին՝ պահանջելով որ անոնք ուրանան իրենց կրօնքը եւ կրակապաշտ դառնան: Դարերու խորքէն եկող դէպքը հարազատօրէն մեկնաբանեցին իննամեայ փոքրերը եւ յափշտակութեամբ ընդունեցին ներկաները, կարծես առաջին անգամ էր որ կը լսուէր 1500 տարուան այդ դէպքը:  
 Հրաշալի են մեր տղաքը, այնքան համոզիչ վճռակամութեամբ կը խօսէր վարդանը՝ Ատիս Հարմանտեան իր նախարարներու հետ, արքայավայել էր Յակոբի կերպարով Արեգ Պազարեանը, իսկ Արեգ Չամիչեան՝ Ղեւոնդ Երէցի կերպարով մտած էր իսկական հայ կղերի տիպարին մէջ, ան հանդարտ բայց հաստատ խօսքը ուղղեց հայ բանակայիններուն պատերազմի նախօրեակին, Լարա Գըսաճիքեան՝ հերոս հայուհին մարմնացուց վարդանի դուստրը, երրորդ դասարանի մնացեալ աղջիկները իրենց պատմելու շնորհքով ամբողջացուցին թատերական պատկերները՝ տալով պատմական մանրամասնութիւններ, իսկ աւարտին երբ ճակատամարտի դաշտին մէջ վարդանի մայրը՝ մարմնաւորուած Արենի Հալսպլեանով, կ'որոնէր նահատակ զաւակը եւ հայ կնոջ յատուկ վեհանձնութեամբ կ'ըսէր «Ես կը տեսնեմ մեր քաջարի նահատակներուն դիակներուն ընդմէջէն փառքը հայ ժողովուրդին, եւ լինելութեան պսակը փառապանծ...», մինչ կը հնչէր Թինա Եղիայեանի անուշ ձայնը որ կը մեկնաբանէր «Լուեց Ամպեր»ը ամբողջացնելով օրուան խորհուրդը:  
 Պատգամը փոխանցուած էր, հանդիսատեսը բաւարարուած, ուսուցիչը գոհունակ:

Չուճ է քայլեր, որոնք հակամարտ տարածաշրջանում կը ձեւաւորեն հանրային հանդուրժողութիւն արձանագրուած ստատուս-քոնոյի հանդէպ, այլ կերպ ասած, Եւրամիութիւնը հակամարտ կողմերին պէտք է առաջարկի ստատուս-քոնոյի առկայութեան պայմաններում համակցութեան ընդհանուր եւ երկարաժամկէտ նորմեր ու կանոններ: Թւում է, թէ դա անիրականանալի խնդիր է: Սակայն, ի զուր է ունէ մէկին թւում, թէ ստատուս-քոնոյի փոփոխութեամբ ընդհանուր խաղաղ համակցութեան մօտենալը աւելի իրականանալի եւ իրատեսական տարբերակ է:  
 «ԼՐԱԳԻՐ»

**ՎԱՐՉՈՒ ԳՐԱՍԵՆԵԱԿՆԵՐ**  
 1060 North Allen Ave  
 Pasadena, CA 91104  
 Գրասենեակները վերանորոգուած եւ յարմար վարձքերով  
 Գրասենեակները հեռաձայնել՝  
 (626) 398-0506



USC INSTITUTE OF ARMENIAN STUDIES  
Leadership Council

*Seventh Anniversary Gala Banquet  
in honor of the*

USC SHOAH FOUNDATION INSTITUTE  
FOR VISUAL HISTORY AND EDUCATION

*for championing the*

ARMENIAN GENOCIDE DIGITIZATION PROJECT



USC  
University of  
Southern California



**SUNDAY, APRIL 15, 2012**

RECEPTION 5:30 PM

DINNER 6:30 PM

**THE BEVERLY HILTON**

INTERNATIONAL BALLROOM

9876 WILSHIRE BOULEVARD

BEVERLY HILLS, CALIFORNIA 90210

**FOR INFORMATION CONTACT**

ELIZABETH AGBABIAN (310) 476-5306 • DIANE CABRALOFF (562) 943-1081

ALICE CHAKRIAN (818) 388-6734 • LORI MUNCHERIAN (310) 936-4758

SAVEY TUFENKIAN (818) 956-8455

**DON'T LET  
THEIR VOICES  
BE FORGOTTEN.**

**USCDornsife**

Dana and David Dornsife  
College of Letters, Arts and Sciences